

## **ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ Դավիթ Յովհաննիսյան**

Վերջին ժամանակներս միջազգային տարբեր գիտաժողովներում եւ քաղաքական քննարկումներում վերստին եւ հաճախակի սկսել են շրջանառվել «համակովկասյան քաղաքականություն», «կովկասյան տարածաշրջան», «ընդհանուր Կովկաս» եւ նման իմաստ պարունակող այլ եզրեր:

Ամենայն հավանականությամբ, այս ոչ այնքան նոր թեման ներկայիս աշխարհաքաղաքական տեղաշարժերում նոր հնչողություն է ձեռք բերում: Հարցն այն է, որ այս դաշտում հայտնվել են մի շարք նոր գործոններ, որոնք անհրաժեշտ են դարձնում Կովկասը՝ որպես մեկ միասնական հասկացություն ընկալելը: Այդ գործոններից կարելուրագույններն են.

ա) Եվրոպական Միության ընդլայնման ծրագրերի անխուսափելի հետաձգումը, ինչը պարզ դարձավ Ֆրանսիայում եւ Հոլանդիայում տեղի ունեցած եվրոպական սահմանադրության հանրաքվեներում: ԵՄ ծրագրերի փոփոխությունն անմիջականորեն ազդում է ոչ միայն Թուրքիայի կամ Ուկրաինայի ու Սուդովայի հեռանկարների, այլեւ եվրաինտեգրման քաղաքականությունը որդեգրած հարավկովկասյան երեք հանրապետությունների, հատկապես՝ Վրաստանի վրա: Հասկանալի է, որ նոր պայմաններում հիմնական ուշադրությունը պետք է դարձվի «Նոր հարեւաններ» ծրագրին, որի իրականացումը Հարավային Կովկասում պահանջում է համագործակցության եւ ջանքերի համախմբման շատ ավելի բարձր մակարդակ, քան դա եղել է մինչ այժմ,

բ) ռուսական Կովկասում իրավիճակի կտրուկ բարդացումը,

գ) Վրաստանից ռուսական ռազմախարհիսխների դուրսբերման ժամկետների ճշտումը, ինչը ռուսական քաղաքական ընտրանու գիտակցության մեջ վերջնականապես հաստատեց այն միտքը, որ Վրաստանում ռուսական ներկայություն, զոնե միջին ժամանակային պլանավորման կտրվածքով, այլեւս չի լինի: Սրան պետք է ավելացնել նաեւ հայկական եւ ադրբեջանական հասարակությունների գիտակցության մեջ արագորեն հաստատվող այն միտքը, որ «իրական անվտանգությունը ՆԱՏՕ համակարգում է» (համաձայն «Ռեզոլուցիոն» գործակալության հրապարակած տվյալների, Հայաստանում հարցվածների 35 տոկոսն արտահայտվել է ՆԱՏՕ կազմի մեջ մտնելու օգտին, ինչը դեռեւս երկու տարի առաջ աներեւակայելի էր):

Կան նաեւ բազմաթիվ այլ գործոններ, որոնք կապված են ներքին զարգացումների հետ:

Վերջերս ԱՄՆ ՅԵԼՍԻՆԿՅԱՆ հանձնաժողովի (*հաստատության պաշտոնական անվանումն է՝ «Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության հանձնաժողով»*): Յիմնվել է ԱՄՆ կառավարության կողմից, որի կազմի մեջ են Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի իննական ներկայացուցիչ, ինչպես նաեւ մեկական ներկայացուցիչ պետդեպարտամենտից, պաշտպանության եւ առեւտրի նախարարություններից: Յանձնաժողովի հիմնական խնդիրն է՝ հետեւել 1975թ. ՅԵԼՍԻՆԿՅԱՆ համաձայնագրի դրույթների կատարման ընթացքին) համանախագահ, կոնգրեսական Քրիս Սմիթը Վաշինգտոնում հանդիպել է մի խումբ ադրբեջանական խորհրդարանականների հետ եւ հայտարարել, թե ինքը խիստ հիասթափված է այն հանգամանքից, որ ադրբեջանական խորհրդարանն ընտրությունների մասին այնպիսի օրենք է ընդունել, որի մեջ չեն ընդգրկվել նախորդ ընտրություններից հետո միջազգային դիտորդների կողմից առաջարկված մի շարք սկզբունքային դրույթներ:

Սմիթը, մի քանի այլ կոնգրեսականների հետ, առաջարկել է ԱՄՆ Կոնգրեսին ընդունել որոշում, որով պետք է դիմել Ադրբեջանին, որպեսզի վերջինս Միացյալ Նահանգներին հավաստիքներ տա, որ առաջիկա նոյեմբերին կայանալիք ընտրությունները կլինեն «կազմակերպված, խաղաղ, ազատ եւ ազնիվ»: Ամենայն հավանականությամբ, այս առաջարկը Կոնգրեսը կքննարկի ընտրությունների նախօրյակին:

Վերջին շրջանում ամերիկյան եւ եվրոպական տարբեր բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից նման իմաստով հայտարարություններ շատ հաճախ են արվում: Սա թույլ է տալիս տարբեր երկրների եւ, հատկապես՝ նախկին խորհրդային հանրապետությունների վերլուծաբաններին կանխատեսումներ կատարել Ադրբեջանում աշնանը կայանալիք հեղափոխության կամ, առնվազն, իշխանափոխության վերաբերյալ:

Քաղաքական մեկնաբանները շեշտում են, որ նախորդ ընտրություններում Իլիհամ Ալիևը կեղծել է արդյունքները, եւ դա ներվել է, որովհետեւ նախ՝ անհրաժեշտ էր դեռ ներկայիս նախագահի հոր հետ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա ավարտին հասցնել Բաքու—Թբիլիսի—Ջեյհան աշխարհաքաղաքական կարեւորագույն նշանակություն ունեցող նախագիծը, ապա՝ երիտասարդ ժառանգը կարողացել էր համոզել ամերիկացիներին եւ եվրոպացիներին, որ ինքն այն մարդն է, որն առանց անցանկալի բարդությունների կիրականացնի ժողովրդավարական ռեֆորմներ ու կհամաձայնի ԼՂ հարցի խաղաղ լուծման հետ, եւ, վերջապես՝ նրա թեկնածությունը միակն էր, որի շուրջ կարող էին համաձայնության գալ Սպիտակ տունը եւ Կրեմլը:

Սակայն այս բոլոր գործոններն էլ, ըստ դիտորդների, կորցրել են իրենց ուժը: Ներկայումս շատ ավելի կարելու է համարվում ժողովրդավարական արժեքների իրական արմատավորումն ադրբեջանական հասարակության մեջ, ինչը թույլ կտա փակել իսլամիզմի ճանապարհը: Այս նպատակին հասնելու համար պետք է, առաջին հերթին, վերացնել կլանային համակարգը, կոռուպցիան, իրական նվաճումներ ունենալ աղքատության հաղթահարման գործընթացում, զարգացնել երկրի մարզերը, որպեսզի ժողովրդագրական ճգնաժամից հնարավոր լինի խուսափել եւ այլն, իսկ այս ամենը նախագահ Ի.Ալիևն ի վիճակի չէ իրականացնել:

Ադրբեջանական ինչպես արեւմտամետ, այնպես էլ ազգայնական թեւին պատկանող ընդդիմադիրները հայտարարում են, որ Ի.Ալիևը Ռուսաստանի դրածոն է եւ Կրեմլի կամակատարը:

Վերջապես, պայթած ռումբի տպավորություն է թողել Թուրքիայի վարչապետ Էրդողանի հայտարարությունն այն մասին, թե Ադրբեջանի ղեկավարության մեջ կան «քրդերի դրածոներ»:

Թվում է, թե վերլուծաբանների փաստարկները խոսում են սպասվող «թավշյա» հեղափոխության օգտին: Սակայն վերջին ժամանակահատվածում աստիճանաբար ավելի ու ավելի կարելու է նշանակություն է ձեռք բերում մի գործոն, որը չի կարելի անվանել նոր, բայց որը ներկայումս չափազանց ակտուալ է. Յյուսիսային Կովկասում արագորեն ծավալվող իրադարձությունները, որոնցում Ադրբեջանի դերակատարությունը կարող է շատ կարելու լինել, ինչն, անկասկած, գիտակցում են եւ տարածաշրջանի հիմնական խաղացողները, եւ Իլհամ Ալիևը:

Յյուսիսային Կովկասի գործոնի ակտիվացումը նորից հարցականի տակ է դնում Ռուսաստանի կովկասյան ամբողջ քաղաքականությունը, որի հետեւանքով նա գրեթե կորցրել է հսկողությունն իր Հարավային դաշնային օկրուգի մեջ մտնող կովկասյան բոլոր այն տարածքների նկատմամբ, որտեղ տեղակայված չեն ռազմական մեծ ստորաբաժանումներ:

Կովկասում ստեղծված իրավիճակը ստիպում է Ռուսաստանի բարձրագույն ղեկավարությանը՝ վերազնահատել իր գործողությունների իմաստն այս տարածաշրջանում, ինչն անհնար է առանց ընդհանուր քաղաքական գնահատականների փոփոխման:

Այս առումով կարելու է այն տեղեկատվությունը, համաձայն որի Կրեմլում նորից հաղթում է տեսակետն այն մասին, թե Կովկասը պետք է դիտվի որպես մեկ միասնական միավոր, ուստի եւ ռուսական քաղաքականությունը պետք է հասցեագրվի ողջ Կովկասին, այլ ոչ միայն նրա հյուսիսին:

Հարցն այն է, որ երկար որոնումներից հետո ռուսական քաղաքական

սերուցքի ներկայացուցիչները հասկացան, որ առանց Հարավային Կովկասի վրա ազդեցություն ունենալու՝ անհնար է իրադրությունը կարգավորել եւ կայուն վիճակ հաստատել Հյուսիսային Կովկասում:

Միաժամանակ մի շարք փորձագետներ նշում են, որ Մոսկվան արդեն բաց է թողել ժամանակը եւ կորցրել հարավկովկասյան ենթատարածաշրջանում իր ազդեցությունը պահպանելու հնարավորությունը, ինչի համար չունի անհրաժեշտ մարդկային եւ նյութական ռեսուրսներ: Ռուսաստանյան վերլուծաբանները խիստ քննադատության են ենթարկում ռուսական իշխանություններին՝ «կացնային» քաղաքականության, նոր քաղաքական տեխնոլոգիաներին չտիրապետելու եւ տարածաշրջանի ժողովուրդներին ռուսների դեմ տրամադրելու համար: Այս ոգով են անցնում բոլոր «փակ» եւ «բաց» քննարկումները:

Ռուսաստանյան քաղաքագետներին եւ վերլուծաբաններին ներկայումս մեծագույն անհանգստություն է պատճառում իրավիճակը Դաղստանում: Այն դեպքում, երբ պայթուցավտանգ է իրավիճակն օսինգուշական հարաբերություններում, Կաբարդայում, շարունակում է հսկողությունից դուրս մնալ Չեչնիան եւ այլն:

Բանն այն է, որ, համաձայն տարածաշրջանից եկող տվյալների, պաշտոնական իշխանությունները կարողանում են իրական կառավարում ապահովել միայն Դաղստանի Կասպիյսկ քաղաքում, որտեղ տեղակայված է ռուսական բանակի զորակայանը:

Մախաչկալայում նրանք միայն «ցերեկային» իշխանություն են, իսկ օրինապահ մարմիններն այնքան բարոյալքված են, որ վախենում են զիջերը փողոց դուրս գալ, եւ քաղաքը հանձնված է տարբեր ոչ ֆորմալ ուժերի ձեռքը:

Կիզլյար եւ Խասավյուրտ քաղաքներում իշխանությունը պատկանում է Դաղստանի ներկայիս նախագահ Մագոմետովին ընդդիմադիր գործիչներին, որոնք ստեղծել են հանրապետությունում լավ համբավ ունեցող «Հյուսիսային դաշինք» կազմակերպությունը:

Ադրբեջանական աղբյուրները հայտնում են, որ մյուս քաղաքներում եւ ավաններում իշխանությունը նույնպես աստիճանաբար անցնում է աքսակալների եւ տեղական ցեղապետերի ձեռքը:

Հարցն ունի նաեւ էթնիկական երանգ, քանի որ Մագոմետովը պատկանում է դարգինական ժողովրդին, որը թվով զիջում է ավարներին, այսինքն՝ երկրորդն է Դաղստանում:

Ներկայիս նախագահն իր կառավարման տարիների ընթացքում հենվել է հիմնականում իր էթնիկական խմբին պատկանող մարդկանց վրա՝ նշանակելով նրանց բոլոր կարեւոր պաշտոններին, միաժամանակ իր ձեռքում կենտրոնացնելով հանրապետության ֆինանսական հոսքերը:

Չանրապետությունում վիճակը բարդացավ հատկապես այն բանից հետո, երբ սրվեցին հարաբերությունները հարեւան Չեչնիայի հետ: Բանն այն է, որ Չեչնիայի տարածքում է գտնվում Բարազդինովսկայա գյուղը, որը բնակեցված է հիմնականում ավարներով:

Մոսկվային ենթարկվող չեչենական ջոկատները վերջին շրջանում մի շարք գործողություններ են իրականացրել այս գյուղի բնակիչների դեմ՝ հիմնավորելով դրանք այն պնդումներով, որ գյուղում գործում է, այսպես կոչված, «Ավարական ջամաաթ» մուսուլմանական արմատական կազմակերպությունը: Դադստանցիները հերքում են այս պնդումները եւ հայտարարում, որ չեչենների նպատակն է՝ քշել գյուղի բնակիչներին իրենց պապենական հողերից:

Ադրբեջանական աղբյուրների պնդմամբ՝ այս ամենը Մոսկվայի ծրագրած գործողություններն են, որոնց նպատակն է՝ իշխանությունից հեռացնել դարգիններին եւ այն հանձնել լեզգիներին, որոնք իրենց թվաքանակով Դադստանի չորրորդ ազգությունն են, ինչը մտահոգում է ոչ միայն ավարներին եւ դարգիններին, այլեւ խիստ անհանգստություն է առաջացրել Բաքվում:

Այստեղ կարծում են, որ Մոսկվայի քաղաքականության ակտիվացումը հիմնականում պայմանավորված է Բաքու — Թբիլիսի — Ջեյհան նավթամուղի բացմամբ, ինչպես նաեւ Վրաստանի իշխանությունների ընդգծված հակառուսական քաղաքականությամբ, որի դրսեւորումներից մեկն էր նաեւ նախագահ Սահակաշվիլու հայտարարությունն այն մասին, թե հաջորդ տարվանից Վրաստանը հրաժարվում է ռուսական գազից եւ ամբողջովին անցնում Ադրբեջանից մատակարարվող վառելանյութին:

Դադստանում սկսվել է իշխանություններին չենթարկվելու զանգվածային շարժում: «Յյուսիսային դաշինքի» ղեկավարությունն ակտիվորեն գործում է բոլոր այն վայրերում, որտեղ կառավարական չինովնիկները մուտք չունեն: Չամաձայն աղբյուրների, Դադստանում իրավիճակի սրման պատճառով հետաձգվել է Չարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Կոզակի սպասվող տեղափոխումը Մոսկվա: Վերջինս գրեթե ամբողջ ժամանակն անցկացնում է Չեչնիայի եւ Դադստանի ռուսական բանակի զորակայաններում: Դադստան վերջին ամսվա ընթացքում լրացուցիչ ստորաբաժանումներ են տեղափոխվել Ռոստովից եւ Աստրախանից: Չամաձայն ադրբեջանական աղբյուրների, դրանց թիվը հասնում է 12 000-ի:

Դադստանում եւ Չեչնիայում ծավալվող իրադարձությունները չափազանց կարելոր են Յյուսիսային Կովկասի ամբողջ իրավիճակի եւ հետագա զարգացումների տեսակետից:

Ռուսաստանի հեղինակավոր քաղաքական գործիչները համոզված

են, որ եթե այս երկու հանրապետությունների միջև զինված բախումներ սկսվեն, ապա Մոսկվան կարող է հրաժարվել ամբողջ Կովկասից, քանի որ իրավիճակը կդառնա բոլորովին անկառավարելի, իսկ ռուսական բանակը կզրկվի խաղաղ բնակչության այսօր արդեն շատ չնչին, բայց դեռևս առկա օժանդակությունից: Նույնը կլինի, եթե Դաղստանում սկսվեն միջէթնիկական կոնֆլիկտներ, որոնցից մինչ այժմ հնարավոր է եղել խուսափել:

Երկու դեպքում էլ կկտրվեն բոլոր կոմունիկացիոն գծերը եւ ենթակառուցվածքային ուղիները, որոնք կապում են Կովկասը Ռուսաստանի հետ, որի հետեւանքով այս տարածաշրջանն ամբողջովին կմեկուսացվի Ռուսաստանից: Այս դեպքում շատ ավելի մեծ հնարավորություններ կստանան արտաքին ուժերը, որոնց մուտքը տարածաշրջան այսօր, այնուամենայնիվ, ինչ-որ չափով ռուսական հատուկ ծառայությունների հսկողության տակ է գտնվում:

Ամենայն հավանականությամբ, նաեւ այս իրադարձություններով է պայմանավորված Մոսկվայի ակտիվացումն արխազական երկաթուղու բացման բանակցություններում: Կրեմլի ճնշման տակ արխազական իշխանությունները հայտարարել են, որ իրենք այլեւս չեն կապում երկաթուղու բացումը քաղաքական պայմանների հետ: Հուլիսին կայացած ռուս-արխազա-վրացական հանդիպման ժամանակ համաձայնություն է ձեռք բերվել երկաթուղու բացման պայմանների մասին:

Ինչպես նշվեց, Մոսկվան ներկայումս ստիպված է վերագնահատել իր կովկասյան քաղաքականությունը: Սակայն կարելի է նաեւ արձանագրել, որ Հյուսիսային Կովկասի նկատմամբ հսկողությունը վերականգնելու համար Ռուսաստանը չունի անհրաժեշտ միջոցներ:

Միաժամանակ, ինչպես դա արդեն սովորական է դարձել, ռուսական քաղաքական վերնախավը բոլոր հնարավոր լուծումներից ընտրում է վատագույնը: Ինչպես հայտնում է գերմանական «Շպիգելը», Բեսլանում կատարված ահաբեկչության կապակցությամբ ստեղծված կառավարական հանձնաժողովն առաջարկ է ներկայացրել, ըստ որի՝ հակաահաբեկչական գործողությունների գոտու մեջ, բացի Չեչնիայից, պետք է ներգրավել նաեւ Դաղստանը, Ինգուշեթիան եւ Հյուսիսային Օսիան: Հետեւանքը պարզ է. այս հանրապետություններում կրկնվելու է այն ամենը, ինչն արդեն կատարվել է Չեչնիայում: Անսանձ բռնություններին, ապօրինությանը զուգահեռ՝ աճելու է իսլամ արմատականների դերը, եւ զինված մարդը դառնալու է միակ օրենք հաստատողը:

Կորցնելով հսկողությունը Հարավային Կովկասի վրա՝ Ռուսաստանը զիջել է այն հենակետը, որից արտաքին ուժերը կարողանում են ծավալել իրենց գործողությունները Հյուսիսային Կովկասի հանրապետություններ-

րում: Սակայն ամենակարեւորը, թերեւս, այն է, որ բարոյալքումը ռուսական քաղաքական ընտրանու շրջանում եւ բանակում թույլ չի տա մոտ ժամանակներս իրականացնել նույնիսկ այն քաղաքականությունը, որի համար Կրեմլը ունի անհրաժեշտ միջոցներ:

Նախագահ Պուտինի եւ մի շարք այլ ռուս բարձրաստիճան քաղաքական գործիչների վերջին շրջանի նյարդային քաղաքական քայլերը եւ հայտարարությունները բացատրվում են նաեւ այս իրողություններով: Ռուսական քաղաքական շրջանակներում տիրում են հուսալքում եւ իրական ելքեր գտնելու վերաբերյալ թերահավատություն:

Այս համատեքստում ակտիվության նոր ալիք է արձանագրվում թե՛ ամերիկյան եւ թե՛ եվրոպական, մասնավորապես՝ բրիտանական կողմից, որոնք, ավանդականորեն, դիտարկել են Կովկասը՝ որպես մեկ միասնական միավոր:

Աստիճանաբար կտրելով բոլոր կոմունիկացիոն գծերը՝ նրանք ստիպում են Ռուսաստանին քայլ առ քայլ հեռանալ իր դիրքերից, իսկ հետո լցնում են ազատված տարածքներն իրենց շահերը ներկայացնող եւ պաշտպանող կովկասյան կառույցներով:

Մյուս կողմից՝ գլոբալ համակարգը պարտադրում է իր խաղի կանոնները՝ տարածաշրջանային ենթակառուցվածքները պետք է միավորվեն, նրանց աշխատանքը պետք է լինի կայուն եւ անխափան, ինչը նույնպես ստիպում է խրախուսել Կովկասի միասնականացման միտումները:

## **ԱԴՐԲԵՋԱՆ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ Սարգիս Հարությունյան**

Եթե 2003թ. ուժերի հարավկովկասյան փոխդասավորվածության վրա զգալի ազդեցություն ունեցան նույն տարվա աշնանը Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունները, որոնց զարգացման տրամաբանությունը մասամբ պահպանվեց 2004թ., ապա այս տարվա սկզբին արդեն իսկ ակնհայտ էր, որ «վրացական գործընթացն» այլևս կորցրել է իր գաղափարախոսական, աշխարհաքաղաքական ռեսուրսը, եւ այդ առումով հանգուցային կետ է դառնում Ադրբեջանը:

Կարելի է միանշանակորեն պնդել, որ այն, ինչ այսօր կատարվում է Ադրբեջանում, եւ այն, ինչի կհանգեցնեն զարգացումներն այդ երկրում, հարավկովկասյան տարածաշրջանի համար կունենան էական նշանակություն, որոնք իրենց ուղղակի ազդեցությունը կթողնեն եվրասիական աշխարհաքաղաքական դաշտի հանգուցային կետեր համարվող՝ Եվրամիության, Ռուսաստանի, Մերձավոր Արեւելքի, Հնդկաստանի եւ Չինաստանի միջեւ ընկած Հարավային Կովկաս (Հյուսիսային Կովկաս) — Կենտրոնական Ասիա ռազմավարական գծի վրա: Եվ այս ամենի առումով որպես «հանգուցալուծման» սկիզբ հանդես են գալիս սույն թվականի նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները, իսկ ավելի ճիշտ՝ այդ ընտրությունների շուրջ ստեղծված իրավիճակը:

### **Իրավիճակային վերլուծություն**

Եթե փորձենք առկա իրավիճակի վերաբերյալ կատարել որոշակի վերլուծություն, ապա կարելի է առանձնացնել հետևյալ կետերը.

❖ 2004թ. երկրորդ կիսամյակում եւ 2005թ. առաջին ամիսներին Ադրբեջանի ուժային կառույցներում ընթացան ակտիվ վերադասավորումներ, որոնց հիմնական նպատակն էր Իլհամ Ալիևի իշխանության ամրապնդումը երկրի ուժային համակարգում,

❖ միեւնույն ժամանակ, որեւիցե լուրջ փոփոխություն չգրանցվեց Ալիև-կրտսերին սատարող քաղաքական համակարգում,

❖ երկրի ընդդիմադիր դաշտում տեղի ունեցավ առաջնորդի փոխարինում. Իսա Ղամբարը փոխարինվեց Ալի Քերիմլիով, որի շուրջ էլ



համախմբվեցին հիմնական ընդդիմադիր կուսակցությունները՝ «Ադրբեջանի ազգային ճակատ. բարեփոխականներ» կուսակցությունը, «Մուսավաթը», Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցությունը, կազմելով «Ուղուր» (հետագայում վերանվանվեց «Ազադլիգ») նախընտրական դաշինքը,

❖ 2005թ. առաջին կիսամյակում գրանցվեց ադրբեջանական ընդդիմության զգալի ակտիվացում,

❖ ժամանակաշրջանը բնորոշվեց ամերիկյան եւ եվրոպական կառույցների կողմից ադրբեջանական ընդդիմությանը (առաջին հերթին՝ Ալի Բերինլիի գլխավորած դաշինքին) ցուցաբերած զգալի քաղաքական, դիվանագիտական, ֆինանսական եւ բարոյական աջակցությամբ,

❖ Ադրբեջանի արտաքին քաղաքականության առումով ԱՄՆ (ս.թ. ապրիլի 12-ին կնքված Ռամսֆելդ—Աբիեւ պայմանագրի տեսքով) եւ Եվրամիության (ԵԽԽՎ պայմանների ընդունման միջոցով) օգտին կատարած որոշ զիջումների հետ միաժամանակ տեղի ունեցավ մերձեցում Ռուսաստանի եւ Իրանի հետ. վերջինիս պարագայում հատկապես կարեւորվում է ս.թ. մայիսի 16-ին կնքված «չհարձակման մասին» պայմանագիրը,

❖ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված գործընթացներից, ըստ էության, հետ մնաց Թուրքիան. Անկարան փորձեց «շտկել իրավիճակը» միայն ս.թ. հունիսին՝ կազմակերպելով Ալի Բերինլիի այցը Անկարա եւ Էրդողանի ժամանումը Բաքու:

Ընդհանուր առմամբ պետք է եզրակացնել, որ թե՛ ԱՄՆ-ը եւ թե՛ Եվրամիությունը ամեն կերպ ձգտում են առաջիկա խորհրդարանական ընտրությունների միջոցով էականորեն մեծացնել իրենց ազդեցությունը Ադրբեջանում, ինչն, անշուշտ, պետք է առաջին հերթին ընկալել որպես ազդեցության մեծացում Զարավային Կովկաս (մաեւ Զյուսիսային Կովկաս)—Կասպյան ավազան ռազմավարական գծում:

Այդ համատեքստում, ըստ ամենայնի, նրանց առավելագույն ծրագիրն է Իլհամ Ալիեւի վարչակարգի փոխարինումը նոր՝ զուտ արեւմտամետ վարչակարգով (տվյալ պարագայում, ըստ էության, խոսքը Ալի Բերինլիի մասին է), նվազագույն ծրագիրն է հնարավորինս թուլացնել, հեղինակազրկել Ալիեւ-կրտսերի վարչակարգը, նրանից կորզել շոշափելի զիջումներ (ինչպես, օրինակ, Ռամսֆելդ—Աբիեւ պայմանագիրը)՝ վերջինիս ավելի զիջող դարձնելու եւ միաժամանակ նրա իսկ վերջնական անկումը նախապատրաստելու համար:

Նման հեռանկարը չի կարող խոսել Ռուսաստանի, Իրանի եւ անգամ Թուրքիայի օգտին, այլապես բոլոր երեք երկրներն էլ զգալիորեն

կորցնում են իրենց ազդեցությունը վերոհիշյալ ռազմավարական գծում: Այդ պատճառով բոլոր երեքն էլ իրենց հաշվարկները, ըստ ամենայնի, առաջին հերթին կապում են Իլհամ Ալիևի վարչակարգի հետ (այստեղ կարելի է նշել, օրինակ, Արցախի հարցում վերջին ժամանակներս Մոսկվայի, Թեհրանի եւ Անկարայի ադրբեջանամետ հայտարարությունները)՝ միեւնույն ժամանակ որոշակի աշխատանք տանելով նաեւ ադրբեջանական ընդդիմության հետ:

Մյուս կողմից՝ ռուս-ադրբեջանական, իրանա-ադրբեջանական եւ թուրք-ադրբեջանական հարաբերություններում տեղի ունեցող այդ տեղաշարժերը Ալիև-կրտսերը փորձում է օգտագործել Արեւմուտքի հետ նոր պայմանավորվածություններ ձեռք բերելու համար:

### **«Փոխզիջումային» սցենար**

Ջարգացման «փոխզիջումային» սցենարը ենթադրում է, որ այս տարվա խորհրդարանական ընտրությունների արդյունքում Իլհամ Ալիևը կպահպանի իր իշխանությունը, կծեւավորվի նրան հիմնականում հնազանդ մի խորհրդարան, Ադրբեջանում, ընդհանուր առմամբ, կպահպանվի գործող համակարգը:

Ներքին քաղաքականության առումով այս սցենարը նշանակում է, որ ադրբեջանական խորհրդարանում, թերեւս, զգալիորեն ներկայացված կլինի ալիևամետ ընդդիմությունը:

Այս սցենարը ենթադրում է ներիշխանական հակասությունների զգալի աճ խորհրդարանական ընտրություններից հետո, որոնք կարող են ավարտվել գերազանցապես արեւմտամետ «երիտասարդ բարեփոխականների» հաղթանակով:

Արտաքին քաղաքականության առումով Ռուսաստանը, Իրանը եւ Թուրքիան կպահպանեն ազդեցության իրենց չափաբաժինները Ալիև-կրտսերի նոր համակարգում, սակայն բաժնետոմսերի մեծ փաթեթները, ըստ ամենայնի, կգտնվեն Վաշինգտոնում եւ Բրյուսելում. այս հետեւությանն է բերում 1991թ. ի վեր Բաքվի բռնած քաղաքական ու տնտեսական ռազմավարությունը, որի արդյունքում Արեւմուտք-Ադրբեջան ինտեգրումն արդեն իսկ պարունակում է համակարգային ինչ-որ տարրեր:

«Փոխզիջումային» սցենարի դեպքում Միացյալ Նահանգները ռազմական առումով իր ներկայությունն է հաստատում Ադրբեջանում, ինչը, սակայն, կարող է որոշակի առումով սահմանափակվել Ռուսաստանի եւ Իրանի նկատմամբ պաշտոնական Բաքվի ստանձնած ինչ-ինչ պարտավորություններով:

### **Սցենար առանց գիշումների**

Այս տարբերակի համաձայն, Ադրբեջանում տեղի է ունենում «համակարգի փոփոխություն»՝ Վրաստանի եւ Ուկրաինայի օրինակներով: Այդ առումով հարցը միգուցե սոսկ ժամանակի մեջ է:

Ներքաղաքական տեսանկյունից պատկերը պետք է որ հնարավորինս մոտ լինի վրացական եւ ուկրաինական տարբերակներին, սակայն՝ ավելի սուր առանձնահատկություններով:

Արտաքին քաղաքականության բնագավառում հաստատվում է գրեթե միանշանակ արեւմտամետություն (այդ առումով ուշագրավ է, որ մինչ օրս Ալի Քերիմլին չի այցելել Ռուսաստան կամ Իրան), որի առաջին արդյունքներից մեկը կարող է հանդիսանալ Ադրբեջանում ամերիկյան ռազմական անխոչընդոտ ներկայության հաստատումը, ինչպես նաեւ Ռուսաստանին պատկանող Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի ապամոնտաժման հարցի մուտքը ռուս-ադրբեջանական օրակարգ: Այս ամենին, անշուշտ, պետք է գումարել նաեւ իրանա-ադրբեջանական հարաբերությունների հավանական սրումը:

### **Ամփոփում**

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քիչ հավանական է համարվում «ոչ արեւմտյան նախաձեռնությամբ» սցենարի ներկայացումը: Առավելագույնը, ինչ կարող են անել ռուսական կամ իրանական կողմերը, դրըզական սցենարի տարրերով «փոխգիշումային» ինչ-որ իրավիճակի հասնելն է, ընդ որում՝ այդ իրավիճակը անգամ միջին ժամանակահատվածի կտրվածքով չի կարող կայուն համարվել: Այս հանգամանքի գլխավոր պատճառն, անշուշտ, Յարավային Կովկասում Մոսկվայի աշխարհաքաղաքական եւ գաղափարախոսական ազդեցության անկումն է անցած առնվազն մեկ տարվա ընթացքում: Հետեւաբար, քիչ հավանական է զուտ ռուսական կամ ռուս-իրանական սցենարի իրականացումը:

Նման պարագայում ամենահավանական քաղաքականությունը, որ կփորձի վարել Իլհամ Ալիևը, իրեն հնարավորինս շահավետ պայմաններով պայմանավորվածություն ձեռք բերելն է առաջին հերթին Արեւմուտքի հետ՝ միաժամանակ կապը չկտրելով Մոսկվայից ու Թեհրանից, եւ այդ կապը կարող է ծառայել որպես յուրահատուկ երաշխիք նույն Արեւմուտքի հետ հարաբերություններում:

Ի դեպ, այս համատեքստում ուշագրավ են Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի հավանական ապամոնտաժման (իբր ի պատասխան Վրաստանից Հայաստան ռուսական ռազմական տեխնիկայի տեղափոխման) հարցի շուրջ վերջերս ադրբեջանական մամուլում հայտնված հրապարակումները: Բացառված չէ, որ Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանին առնչվող զարգացումները ներկայումս հանդիսանում են Արեւմուտք—Ադրբեջան—Ռուսաստան—Իրան բարդ խաղի երեւացող կողմը:

Անցած շուրջ մեկ տարվա ընթացքում Ալիեւ-կրտսերի ջանքերի կենտրոնացումը գլխավորապես ուժային կառույցներում կարող է վկայել, որ նա միտված է՝ որպես իր իշխանության պահպանման հիմնական ռեսուրս, ավելի շատ տեղ հատկացնել ոչ թե հորից ժառանգություն մնացած քաղաքական համակարգին (նախագահական աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի գլխավորությամբ), այլ «երիտասարդ բարեփոխականների» վերահսկողության ներքո գտնվող ուժային կառույցներին: Հետեւաբար՝

- ❖ Ադրբեջանի որոշումների կայացման համակարգում, ըստ ամենայնի, սկսվել է ազդեցությունների վերաբաժանման գործընթաց,

- ❖ սույն նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո (Ալիեւ-կրտսերի իշխանական համակարգի պահպանման դեպքում) շատ հավանական է, որ վերը նշված գործընթացը ձեռք բերի նոր արագություն,

- ❖ գործընթացի արագացման արդյունքում պետք է սպասել հակասությունների աճ ադրբեջանական վերնախավում,

- ❖ զարգացումների տրամաբանությունը հուշում է, որ ելնելով արտաքին ճնշումից՝ Իլհամ Ալիեւը, ըստ ամենայնի, կփորձի վերածել Ադրբեջանի քաղաքական համակարգը՝ «երկիրը բարեփոխելու», «հին կոռումպացված կադրերից ազատվելու եւ նրանց նոր՝ երիտասարդ բարեփոխականներով փոխարինելու» եւ այլ կարգախոսներով:

Այսպիսով, եթե առկա ռեսուրսները հնարավորություն են տալիս Արեւմուտքին հանդես գալ միակ նախաձեռնողի դերում, ապա քիչ հավանական է, որ «փոխզիջումային» տարբերակը (հատկապես երկարատեւ ժամանակահատվածում) ձեռնտու լինի Վաշինգտոնին կամ Բրյուսելին, որոնց ռազմավարական շահերի մեջ քիչ տեղ չի հատկացված նաեւ աշխարհայացքային գործոնին: Հետեւաբար երկրորդ սցենարի տրամաբանությունից դուրս է՝ ժամանակ եւ միջոցներ ծախսել ինչ-որ կարճատեւ իրավիճակի ձեւավորման վրա: Արդյունքում՝ թե՛ Վաշինգտոնը

Եւ թե՛ Բրյուսելը փորձելու են ձեւավորել ադրբեջանական այնպիսի ընտրանի, որն առավելագույնս դուրս կգտնվի զարգացումների հետխորհրդային տրամաբանությունից, ինչն էլ, իր հերթին, կարող է մեխանիկորեն նշանակել, թե այդ ընտրանու գաղափարախոսությունը պետք է սահմանափակվի «Մեծ Մերձավոր Արեւելք» կամ «Ընդլայնված Եվրոպա, նոր հարեւաններ» նախագծերով:

### **Եզրակացություն**

Չարավային Կովկասում ուժերի առկա փոխդասավորվածության եւ այդ առումով ընթացող զարգացումների պայմաններում, հատկապես երկարատեւ ժամանակահատվածի կտրվածքով, ամենից հավանականը երկրորդ սցենարի իրականացումն է, որի հիմնական նպատակն է նոր ռազմավարական համակարգերի ձեւավորումը եվրասիական աշխարհաքաղաքական դաշտում:

Վերջերս Եվրամիությունում տեղի ունեցած գործընթացների արդյունքում քիչ հավանական է, որ առնվազն կարճատեւ ժամանակահատվածի կտրվածքով Չարավային Կովկասում լուրջ հակասություններ առաջանան Վաշինգտոնի եւ Բրյուսելի միջեւ:

Նման պայմաններում առկա գործընթացի միակ այլընտրանք կարող են հանդիսանալ Շանհայի համագործակցության կազմակերպության ռեսուրսները:

## **ԼԵԶԳԻՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ** **Արսեն Հակոբյան**

Կովկասյան ժողովուրդների խմբին պատկանող լեզգիները բնակվում են Դաղստանի հարավում (Ռուսաստան) եւ Ադրբեջանի հյուսիսարեւելյան շրջաններում:

1989թ. խորհրդային վերջին մարդահամարի տվյալների համաձայն, Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակվում էր 171 հազար լեզգի բնակչություն: Միեւնույն ժամանակ, այս տվյալներն ակտիվորեն վիճարկվում էին լեզգիական աղբյուրների կողմից, որոնք նշում էին Ադրբեջանում 600-800 հազար լեզգիների գոյության մասին:

1999թ. Ադրբեջանի Հանրապետության մարդահամարը, ըստ էության, անփոփոխ տվյալներ է հաղորդում լեզգիների թվաքանակի վերաբերյալ՝ փաստելով 178 հազար բնակչության գոյության մասին: Ըստ այդ նույն տվյալների, Ադրբեջանում թվաքանակի առումով լեզգիներն ամենամեծ ազգային փոքրամասնություններից են համարվում՝ կազմելով ամբողջ բնակչության 2,2%-ը: Սակայն նույն ադրբեջանական փորձագիտական տվյալները նշում են Ադրբեջանում 205-260 հազար լեզգիների գոյության մասին՝ ընդգծելով նրանց միջավայրում ժողովրդագրական աճի միտումների առկայությունը:

Հարավային Դաղստանում 1990-ական թթ. վերջերին պաշտոնական տվյալները վավերացնում էին ավելի քան 250 հազար լեզգիների գոյության մասին՝ միեւնույն ժամանակ նույնպես շեշտելով նրանց աճի բարձր տեմպերը:

1813թ. Գյուլիստանի պայմանագրով Դաղստանի եւ Արեւելյան Այսրկովկասի լեզգիաբնակ տարածքները հայտնվեցին Ռուսական կայսրության կազմում:

Մինչեւ 1918թ. լեզգիները բնակվում էին Դաղստանյան շրջանում, Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում, եւ, ըստ էության, նրանց տարածական եւ հավաքական միասնությունը պահպանվում էր:

Ադրբեջանական Հանրապետության ձեւավորումից հետո, սակայն, դա խախտվեց, եւ կովկասյան խայտաբղետ խճանկարում հայտնվեց եւս մեկ «բաժանված ժողովուրդ»: Դա չփոխվեց նաեւ տարածաշրջանի խորհրդայնացումից հետո. խորհրդային տարիներին լեզգիները բնակվում էին ՌԴ ենթակայության տակ գտնվող Դաղստանի Ինքնավար Հանրապետությունում եւ Ադրբեջանական ԽՍՀ-ում:

1938թ. Խորհրդային մեծ հանրագիտարանը «խոստովանում» է, որ դրանով իսկ խախտվեց այս հանրության ազգային միասնականությունը, որը հանգեցրեց Ադրբեջանի տարածքում նրանց մասնակի թրջացմանը: Այնուամենայնիվ, մինչեւ 1930-ական թթ. վերջը, այսինքն՝ մինչեւ «սովետական միասնական ժողովուրդ» ձեւավորելու պաշտոնական գործընթացի մեկնարկը, որին գումարվում էր «ազգ-պետություն» կառուցելու Ադրբեջանի ձգտումը, լեզգիների վիճակը համեմատաբար բարվոք էր: Ադրբեջանաբնակ լեզգիների մոտ գործում էր դեռեւս 1906թ. հիմնադրված թատրոնը, կային լեզգիական դպրոցներ, թերթ: Սակայն շուտով դրանք փակվում են: Ավելին, լեզգիները հայտարարվում են «ոչ տեղաբնիկներ», եւ նրանց ուսման համար սկսում են կիրառվել նվաստացուցիչ մեթոդներ. լեզգիներից կաշառք էին վերցնում ուսումնական հաստատություններում սովորելու դիմաց, իսկ նրանց համար, ովքեր ազգությամբ «ադրբեջանցի» էին գրվում, նման «հարկ» չէր գործում:

Այդ տարիներին լեզգիաբնակ շրջաններում ակտիվ քարոզչություն է ծավալվում երեխաներին ադրբեջանական դպրոցներ տալու ուղղությամբ. դրան ընդդիմացող մտավորականների եւ ուսուցիչների հետ «աշխատում» էր պատժիչ մեքենան, որի հետեւանքով ավելի քան 2000 լեզգի ուսուցիչներ քստրվում են:

Այնուամենայնիվ, ստալինյան ամբողջատիրությունը չի ընկճում ազատատենչ լեռնականներին, եւ «ժողովուրդների հոր» մահից հետո, «ձնհալի ժամանակները» հույսեր են արթնացնում նաեւ նրանց մեջ: 1959թ. ձեւավորվում են լեզգիների իրավունքների համար պայքարող միություններ, որոնք նույնիսկ առաջ են քաշում ինքնավարության պահանջներ: Այս միությունների հիմքը Կուսարիում գործող «Սրտի խոսք» գրական միավորումն էր, որը համախմբում էր լեզգի նշանավոր մտավորականների, սակայն վերջիններս առեղծվածային հանգամանքներում սպանվում են, ուղարկվում հոգեբուժարան կամ էլ ձերբակալվում՝ ենթարկվելով կտտանքների:

Ազգային իրավունքների համար պայքարը ոգեկոչում է նաեւ Դաղստանի լեզգիներին, եւ 1970-ական թթ. Մախաչկալայի համալսարանում կազմավորվում է ուսանողական միություն: Սակայն շարժման ակտիվիստները հեռացվում են ուսանողական նստարաններից:

Այնուամենայնիվ, ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին ազգային իրավունքների պաշտպանության համար ելույթները ուժեղացան: 1989թ. ստեղծվեց «Սադվալ» (Միասնություն) կազմակերպությունը, որի նպատակն էր Լեզգիստանի Հանրապետության կազմավորումը Հյուսիսային Ադրբեջանի եւ Հարավային Դաղստանի լեզգիաբնակ տարածքների

միավորմամբ: Շարժման ղեկավարներից էր պոետ Իզեթ Շարիֆովը, որը 1960-ական թթ. լեզգիական շարժման ակտիվիստներից էր, «Սրտի խոսք» գրական միավորման հիմնադիրներից: 1991թ. սեպտեմբերի 28-ին Դաղստանի Կասունքենդ ավանում տեղի ունեցած համալեզգիական երրորդ համագումարը հռչակեց Լեզգիստանի Հանրապետության ստեղծումը Ադրբեջանի հյուսիսի եւ Դաղստանի հարավի լեզգիաբնակ տարածքներում, Ռուսաստանի Դաշնության կազմում: Համագումարն ընտրեց նաեւ Ազգային խորհուրդ՝ Նարինան Ռամազանովի գլխավորությամբ: 1992թ. լեզգիները շրջափակման ենթարկեցին Բաքու—Ռոստով մայրուղին՝ իրենց պահանջների վրա ուշադրություն հրավիրելու նպատակով: Նույն թվականին, ի պաշտպանություն իրենց իրավունքների՝ լեզգիական ազգային շարժումը Մոսկվայում ցույց կազմակերպեց:

1990-ական թթ. սկզբների այդ հուզումներին կտրուկ արձագանքեց Ադրբեջանի ժողովրդական ճակատը, որը սպառնաց, թե այդպես շարունակվելու դեպքում իրենց երկիրը տարածքային հավակնություններ կդրսեւորի Հարավային Դաղստանի, ներառյալ Դերբենտի նկատմամբ: Դերբենտի հայերի նկատմամբ տեղի ադրբեջանցիների միջոցով փորձ կատարվեց հալածանքներ հրահրել, սակայն լեզգիների ջանքերով դրանք կանխվեցին:

1990-ական թթ. հուզումներ սկսվեցին նաեւ Ադրբեջանի լեզգիաբնակ շրջաններում, սակայն Հեյդար Ալիևի իշխանության գալուց հետո Ադրբեջանի եւ ՌԴ հատուկ ծառայություններն սկսեցին ակտիվորեն հետաանդել շարժման ակտիվիստներին, որոնց մի մասը ձերբակալվեց: Միեւնույն ժամանակ, քայլեր կատարվեցին շարժմանն առավել «չափավոր» բնույթ հաղորդելու համար:

Այնուամենայնիվ, Ադրբեջանի լեզգիաբնակ շրջաններն այժմ էլ համարվում են երկրի ապակայունացման հնարավոր օջախ, որտեղ մշտապես առկա են «անջատողական» շարժումների աշխուժացման վտանգ եւ սպառնալիք՝ ուղղված «միջէթնիկ կայունությանը»: Մտավախություն կա նաեւ, որ Ռուսաստանը կարող է օգտագործել լեզգիական գործոնն իր կովկասյան քաղաքականության մեջ:

Նման մտավախությունների եւ իրավիճակի գնահատման արդյունքում Ադրբեջանի ղեկավարությունը դեռեւս 1990-ական թթ. վերջերին այդ տարածքներում տեղաբաշխել էր բանակային 4 բրիգադ եւ ՆԳՆ հատուկ նշանակության մեկ ստորաբաժանում: Օպերատիվ պլանավորման համաձայն՝ անհրաժեշտության դեպքում դրանց օգնության պետք է հասնեն Բաքվում եւ Ապշերոնում առկա զինվորական միավորումները:

Իրավիճակի բարդությունը Ադրբեջանի լեզգիաբնակ շրջաններում



աճում է նաեւ այն հանգամանքով, որ չնայած տեղական բնակչության դժգոհությանը, իշխանություններն այդ տարածքներում բնակեցնում են թուրք մսխեթցիների եւ հայ-ադրբեջանական հակամարտության գոտուց տարհանվածների:

Չնայած 1990-ական թթ. լեզգիական ազգային շարժման լուրջ կորուստներին (ձերբակալվածներից 7-ը մահանում են Բաքվի բանտում), պայքարը նոր դրսեւորումներ ու մարտավարություն է որդեգրում: Գիտակցվում է այն հանգամանքը, որ ազգային շարժման հաջողությունը կախված է հետեւողական եւ շարունակական աշխատանքից:

Չամարվում է, որ ներկայումս «Սադվալ» շարժումը հանդես է գալիս երեք թեւերով՝ քաղաքական, ռազմական եւ դիվերսիոն-ահաբեկչական: Որոշ գնահատականների համաձայն, լեզգիական ռազմական կազմավորումների թվակազմը հասնում է մինչեւ 10-12 հազար մարդու, շարժման ներկայացուցիչների կարծիքով՝ անհրաժեշտության դեպքում մինչեւ 20-22 հազար մարդ կարող է զենքի կոչվել:

Այնուամենայնիվ, լեզգիական շարժումն իր առանձնահատկություններն ունի՝ կապված պատմական փորձի, քաղաքական պահանջների ձեւակերպումների հետ: Օրինակ՝ որպես խնդրի լուծման միջանկյալ տարբերակ 1990-ական թթ. վերջերին առաջ քաշվեց Ադրբեջանում եւ ՌԴ-ում ինքնավարությունների կազմավորման խնդիրը: Միեւնույն ժամանակ, ակտիվ գործընթացներ են տեղի ունենում հենց Չարավային Դաղստանի լեզգիաբնակ շրջաններում: Մասնավորապես, տվյալները ցույց են տալիս, որ այստեղ լեզգի բնակչության թվաքանակն աճում է, օրինակ, ադրբեջանցիների համեմատ: Նույնիսկ խնդիր է դրվել Դերբենտը դարձնել ազգային-մշակութային, քաղաքական կենտրոն, եւ ինտենսիվորեն ընթանում է քաղաքի բնակեցումը լեզգիներով:

Որոշ տվյալների համաձայն, չի բացառվում անգամ Դաղստանի տրոհումը երեք հատվածների, որտեղ հարավային գոտին կգլխավորեն լեզգիները: Նկատենք, որ այս սցենարներն ուրվագծվում էին դեռեւս 1990-ական թթ. վերջերին, սակայն վերջերս, կապված Դաղստանում հայտնի իրադարձությունների հետ, կրկին սկսել է քննարկվել այդ գաղափարի իրագործման հնարավորությունը: Խնդիրն այն է, որ դեռեւս խորհրդային տարիներին Դաղստանում կայունություն ապահովելու համար իշխանությունը բաժանվում էր 3-4 խոշոր էթնոսների միջեւ՝ ավարներ, դարգիններ, լեզգիներ եւ կումիկներ: Վերջին տարիներին լեզգիները դուրս էին մղված այս համակարգից, սակայն նրանց թվաքանակի անշեղ աճը նման հավակնությունների իրական նախադրյալներ է ստեղծում:

Նկատենք, որ 1990-ական թթ. վերջերից ՌԴ վերաբերմունքը լեզգիական շարժման նկատմամբ որոշ առումով փոխվեց՝ կապված աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային որոշակի զարգացումների հետ: Մասնավորապես, շարժման ղեկավարությունը, թերեւս, ոչ առանց ՌԴ հատուկ ծառայությունների մասնակցության, ստանձնեցին առավել վճռական եւ երիտասարդ գործիչներ: Ակտիվացավ շարժման արտասահմանայն գործունեությունը (Հաագայում նրանք գրանցված են որպես «չճանաչված ժողովուրդ»): Համարվում է, որ ՌԴ-ն նպատակ ունի լեզգիական գործոնի միջոցով Ադրբեջանի նկատմամբ ազդեցության խոշոր լծակ ձեռք բերել, ինչպես եւ՝ իր փաստացի վերահսկողության ներքո ունենալով լեզգիական կազմակերպված խմբավորումներ, անհրաժեշտության դեպքում դրանք օգտագործել ոչ ստանդարտ իրավիճակներում:

## **ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ**

### **Գազիկ Տեր-Չարությունյան**

Ս/թ. հուլիսի 1-ին Մոսկվայում Ռուսաստանի եւ Չինաստանի դեկավարները ստորագրեցին 12 կետից բաղկացած «ՌԴ եւ ՉԺՉ համատեղ դեկլարացիան 21-րդ դարի միջազգային աշխարհակարգի վերաբերյալ» անունը կրող փաստաթուղթ: Սառը պատերազմից հետո սա առաջին փաստաթուղթն է, որով երկու մեծ տերություններ համատեղ եւ ուղղակիորեն հայտարարում են ԱՄՆ քաղաքական գաղափարախոսության հետ իրենց անհամաձայնության մասին: Նախկինում Չինաստանը եւ հատկապես Ռուսաստանն անհամեմատ ավելի զգույշ եւ փափուկ էին արտահայտում իրենց դժգոհությունը ԱՄՆ-ից: Նման փաստաթղթի հայտնվելը կարող է կարելորագույն նշանակություն ունենալ քաղաքական գլոբալ զարգացումների համար եւ վկայում է այն մասին, որ.

❖ ՌԴ-ի եւ ՉԺՉ -ի միջեւ հարաբերությունները թեւակոխել են նոր, միմյանց նկատմամբ բարձր վստահությամբ եւ ռազմավարական համագործակցությամբ բնութագրվող փուլ: Մասնավորապես, դրա մասին է վկայում ոչ միայն երկու երկրների միջեւ տնտեսական եւ ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցության մեծ ծավալը, այլեւ մոտ ժամանակներս կայանալիք ռուս-չինական համատեղ զինավարժությունները:

❖ ԱՄՆ քաղաքականությունը ՌԴ-ի եւ ՉԺՉ-ի նկատմամբ որակական զարգացում է ապրել. ներկայիս ամերիկյան ռազմավարությունը լուրջ մարտահրավեր է այդ երկու տերություններին: Դա ստիպում է ռուսներին եւ չինացիներին միավորել իրենց հնարավորությունները:

❖ Երկու երկրների դեկավարությունները գտնում են, որ իրենք արդեն ունեն բավականաչափ ռազմաքաղաքական եւ տնտեսական ներուժ, որպեսզի կարողանան դիմակայել ԱՄՆ մենատիրությանը:

Միեւնույն ժամանակ, դեկլարացիայի բովանդակությունը հնարավորություն է տալիս ընթացել այն գաղափարական սկզբունքները, որոնցով պատրաստվում են շարժվել կողմերն իրենց նպատակներին հասնելու համար.

1. Կողմերը գտնում են, որ ներկայիս գլոբալացման գործընթացները պետք է հանգեցնեն տնտեսական ու տեղեկատվական դաշտերի

ինտեգրմանը, սակայն այդ զարգացումները չպետք է խոչընդոտեն բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորմանը: Այսպիսով, ամրագրվում է նրանց սկզբունքային անհամաձայնությունը միաբեւեռ աշխարհակարգի ամերիկյան մոտեցման նկատմամբ:

2. Կողմերը հանդես են գալիս որպես միջազգային իրավունքի պաշտպանման կողմնակիցներ: Նրանք ամրագրում են ժողովուրդների իրավունքը՝ զարգացման սեփական ուղի ընտրելու գործում: Այսինքն՝ հանդես են գալիս ամերիկյան այն սկզբունքի դեմ, ըստ որի՝ բոլոր երկրները պետք է ունենան ունիվերսալ, նույնատիպ զարգացման ճանապարհ:

3. Կողմերն ընդգծում են ՄԱԿ կարեւորությունը եւ անփոխարինելիությունը միջազգային գործերում եւ այդպիսով դեմ են հանդես գալիս ՄԱԿ դերի արժեզրկմանն ուղղված ամերիկյան ռազմավարությանը:

4. Դեկլարացիայում հատուկ վերաբերմունք կա ամերիկյան «քաղաքակրթությունների բախման» տեսության դեմ:

5. Կողմերն անդրադառնում են զանգվածային ոչնչացման զենքի կիրառումն ու տարածումը կանխելու անհրաժեշտությանը: Սա ուղղված է այն իրողության դեմ, որ ԱՄՆ-ն առ այսօր չի ստորագրել քիմիական եւ կենսաբանական զենքի արգելման կոնվենցիաները եւ մշակում է ծրագրեր միջուկային զենքի «լուկալ» օգտագործման վերաբերյալ:

6. Փաստաթղթում հատուկ ուշադրություն է դարձվում տարածաշրջանային ինտեգրացիայի խնդիրներին, մասնավորապես՝ «տարածաշրջանային բլոկների» միջեւ հորիզոնական կապերին: Այստեղ կողմերը հստակ մերժում են ԱՄՆ հայտնի քաղաքականությունը՝ այլ տերությունների միջեւ դաշնակցային գործընթացների կանխարգելման ուղղությամբ:

7. Կողմերը, պետությունների ինքնիշխանության հարգման համատեքստում, անդրադառնում են մարդու իրավունքների պաշտպանման խնդրին: Այս թեզը, ակնհայտորեն, նույնպես ուղղված է ԱՄՆ-ի դեմ: Տեղին է նշել, որ ամեն տարի ՉԺՅ-ն (ինչպես դա անում է ԱՄՆ պետդեսպարտամենտը) հրապարակում է հատուկ տեղեկագիր, որտեղ բերվում եւ մեկնաբանվում են ԱՄՆ-ում մարդու իրավունքների խախտման դեպքերը:

Ինչպես տեսնում ենք, դեկլարացիայի բոլոր սկզբունքներն ուղղված են ամերիկյան մոտեցումների դեմ: Հատկանշական է, որ փաստաթուղթն անփոփոխ է այն եզրակացությամբ, թե ստորագրված դեկլարացիան

արտահայտում է Նոր աշխարհակարգի սկզբունքները: Հաստատելով իրենց վճռականությունը՝ համատեղ իրագործելու դեկլարացիայի թեզերը, Չինաստանը եւ Ռուսաստանը, որպես Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) հիմնադիր անդամներ, որոշում են ընդլայնել եւ այդպիսով էապես հզորացնել ուժի նոր բեւեռի հավակնություններ ներկայացնող այդ կազմակերպությունը:

### **Շանհայի համագործակցության կազմակերպության ընդլայնումը**

Անցյալ տարի Աստանայում կայացած ՇՀԿ գագաթաժողովում կազմակերպության դիտորդի կարգավիճակ ստացավ Մոնղոլիան: Այս տարի հայտարարվեց, որ կազմակերպության դիտորդի կարգավիճակ են ստացել Իրանը, Հնդկաստանը եւ Պակիստանը: Նշենք, որ դեռ 2004-ին իրանական լրատվական աղբյուրներում արծարծվում էր Իրանի անդամակցության հարցը, սակայն տեղեկատվական հոսքից ստացված տպավորությունն այնպիսին էր, որ Չինաստանը, թերեւս, շահագրգռված չէր, որպեսզի Իրանն անդամակցի ՇՀԿ-ին, քանի որ այդպիսով կշեշտվեր այդ կազմակերպության հակամերիկյան կողմնորոշումը: Սակայն թվում է, թե չինական քաղաքական հաշվարկներում խիստ բարձրացել է նավթի գործոնի դերը, որի կարիքը ՉԺՀ աճող տնտեսությունում շատ սուր է զգացվում: Ինչպես հայտնի է, ՉԺՀ-ն, ի հաշիվ նավթի, դարձել է Իրանի թիվ մեկ առևտրատնտեսական գործընկերը: Թերեւս, այս տնտեսական հանգամանքը, ինչպես նաեւ ԱՄՆ հարձակողական քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում ստիպել են ՉԺՀ ղեկավարներին վերանայել իրենց մոտեցումներն Իրանի նկատմամբ, եւ այդ երկիրն անդամակցելու է ՇՀԿ-ին առայժմ դիտորդի կարգավիճակով:

Նախկինում խիստ խնդրահարույց էր նաեւ Հնդկաստանի եւ Պակիստանի մասնակցությունը (հաշվի առնելով նրանց միջեւ լարված, երբեմն կիսապատերազմականի հասնող հարաբերությունները) ՇՀԿ աշխատանքներին: Սակայն վերջին տարիներին այդ երկու երկրների, ինչպես նաեւ Չինաստանի եւ Հնդկաստանի միջեւ հարաբերությունները զգալիորեն բարելավվել են:

Հայտնի է, որ Պակիստանը սերտ կապեր ունի ԱՄՆ-ի հետ, սակայն այդ երկիրն ակտիվորեն համագործակցում է նաեւ ՉԺՀ-ի հետ (մասնավորապես՝ համարվում է, որ միջուկային զենքի տեխնոլոգիաները Պակիստանին է հանձնել Չինաստանը): Այսինքն՝ ՇՀԿ-ն ցուցադրում է հավակնություն՝ «իր կողմը գրավելու» այդ երկիրը:

Հարկ է շեշտել, որ ՉԺՀ-ն ակտիվ քաղաքական-տնտեսական կապեր է հաստատել ՇՀԿ անդամ բոլոր երկրների հետ: Առանձնապես ուշագրավ են հարաբերությունները Ղազախստանի հետ, երկիր, որը տարածաշրջանային տերության վերածվելու իրական հնարավորություններ ունի: ՇՀԿ գազաթափողովի նախօրեին Նազարբաևը եւ Խու Ցզինտաոն կնքեցին ռազմավարական պայմանագիր՝ Ղազախստանը Չինաստանի հետ կապող մոտ 3000 կմ երկարությամբ եւ \$2.5 մլրդ արժողությամբ երկաթգծի շինարարության վերաբերյալ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ այսօր ՇՀԿ-ում այս կամ այն կարգավիճակով կենտրոնացել են 5 միջուկային պետություն (Իրանի միջուկային զենք ունենալն այսօր գրեթե անվիճելի փաստ է): ՇՀԿ ընդլայնվելը վկայում է, որ այսօր եվրասիական խոշոր տերությունների զգալի մասը որոշակի հիասթափություն է ապրել ԱՄՆ-ից եւ միեւնույն ժամանակ այնքան է հզորացել, որ փորձում է համատեղ լուծել տարածաշրջանային խնդիրները՝ առանց միջնորդների: Այս համատեքստում տրամաբանական է, որ Աստանայի գազաթափողովի ամփոփագրում ամրագրվեց այն դրույթը, համաձայն որի ՇՀԿ անդամ երկրների տարածքը մինչեւ 2020թ. պետք է վերածվի ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժման գոտու:

Այսպիսով, այսօր արդեն կարելի է խոսել այն մասին, որ ՇՀԿ-ն կայացած կազմակերպություն է: Նրա ավելի արդյունավետ գործելու հիմնական խոչընդոտը Ռուսաստանի եւ Չինաստանի մրցակցությունն է: Սակայն ամերիկյան քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում օբյեկտիվորեն նպաստում է նրան, որպեսզի համագործակցությունն այդ երկրների միջեւ գերակայի մրցակցային գործոնների հանդեպ: Դրա մասին է, մասնավորապես, վկայում այդ տերությունների վերաբերմունքը Ուզբեկստանի հայտնի դեպքերին:

### ***Մրցակցություն Ուզբեկստանում***

Կենտրոնական Ասիայում (ինչպես եւ Հարավային Կովկասում) ԱՄՆ ակտիվացման արագ տեմպերն ինչ-որ չափով պայմանավորված են նաեւ ՇՀԿ հզորանալու միտումներով: Այդ համատեքստում չի կարելի բացառել, որ տեսանելի ապագայում եվրասիայի կորիզը կազմող այդ երկրները կարող են սկսել ԱՄՆ-ին եվրասիական գերմայրցամաքից դուրս մղելու գործընթացը: Որ նման սցենարը բացառված չէ՝ վկայում են այն զարգացումները, որոնք ընթացան վերջերս Ուզբեկստանում:

Ինչպես հայտնի է, ԱՊՀ տարածքում «հեղափոխություններ»

կազմակերպելու առումով ԱՄՆ-ի համար լուրջ խոչընդոտներ են ծագել Ուզբեկստանում: Անդիջանի խլրտումներից հետո դեպքերը զարգացան ոչ ստանդարտ սցենարով: Իսլամ Քարիմովը խռովությունը ճնշելուց հետո անմիջապես մեկնեց Պեկին, որտեղ նրան խոստացան ամեն տեսակ օգնություն եւ \$600 մլն: Այդ այցելության ընթացքում ստացած երաշխիքները թույլ տվեցին Քարիմովին փոխել մոտեցումն ամերիկացիների հետ հարաբերություններում: Օրինակ, ԱՄՆ այն սպառնալիքներին, թե Անդիջանի դեպքերի հետաքննությունը կներկայացվի ՄԱԿ-ում, նա պատասխանեց ավելի քան կոշտ եւ, ինչն էական է, զգալիորեն սահմանափակեց Քարշի-խանաբադում տեղադրված ԱՄՆ ավիաբազայի գործելու հնարավորությունները. մասնավորապես՝ արգելվեցին գիշերային թռիչքները եւ ծանր ռմբակոծիչների տեղակայումը (ԱՄՆ-ը ստիպված եղավ դրանք տեղափոխել Աֆղանստան): Ներկայումս ստացվում են լուրեր, որ ԱՄՆ-ը ընդհանրապես կարող է լքել Քարշի-խանաբադը:

Ակնհայտ է, որ Քարիմովի նման պատասխանը կապված է Չինաստանի եւ Ռուսաստանի վճռական դիրքորոշման հետ եւ վկայում է այն մասին, որ այդ տերությունները համարժեք են ըմբռնում ԱՄՆ-ի՝ Կենտրոնական Ասիա կատարած էքսպանսիայի իմաստը:

Այսպիսով, կարելի է ամրագրել, որ ՉԺՅ-ն սկսել է արդյունավետ մրցակցել ԱՄՆ-ի հետ՝ Կենտրոնական Ասիայում իշխող դիրք գրավելու համար. առաջին անգամ հետխորհրդային տարածքում արձանագրվել է առերես հակամարտություն ԱՄՆ-ի եւ Չինաստանի միջեւ, որը, թերեւս, ավարտվել է ոչ հօգուտ ԱՄՆ-ի:

Միաժամանակ, հարկ է շեշտել, որ Ուզբեկստանի դիրքորոշումը համահունչ է ՇՀԿ քաղաքականության տրամաբանությանը: Մասնավորապես, Աստանայի գազաթաժողովի ամփոփագրում նշվեց, որ ՇՀԿ անդամ երկրները պետք է որոշակիացնեն Աֆղանստանի դեմ հակահաբեկչական գործողությունների հետեւանքով՝ իրենց տարածքում ստեղծված ԱՄՆ ռազմակայանների տեղակայման ժամկետները:

## **ԻՐԱՆ. ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅ, ՀԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՍԵՆԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

Իրանում տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքն անակնկալ էր ոչ միայն միջազգային հանրության, այլև այդ երկրի հասարակության մի զգալի շերտի համար: Փորձառու Հաշեմի-Ռաֆսանջանի պարտությունը, թերևս, շատ քչերն էին կռահում, քանզի նրա վարկը եւ իսլամական հանրապետության պատմության մեջ խաղացած դերը բավարար էին թվում հաղթանակի համար: Այս ամենից բացի, միջազգային իրավիճակի սրացումը Իրանի շուրջ կարծես թե թելադրում էր Հաշեմի-Ռաֆսանջանի վերադարձը նախագահական ղեկին, քանզի նրա փորձը եւ հմտությունն ավելի քան անհրաժեշտ էին երկրի կենսունակության համար: Սակայն Իրանի ժողովուրդը կատարեց իր ընտրությունը, եւ այդ ընտրության արդյունքում Իրանի նոր նախագահ դարձավ պահպանողական Մ.Ահմադինեժադը:

Ահմադինեժադի հաղթանակն արդյունք է Իրանում ստեղծված նոր քաղաքական իրավիճակի.

1. 2003 թվականի փետրվարին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, որոնցում հաղթանակ տարան պահպանողականները, Իրանի ներքաղաքական դաշտում բարեփոխումների կողմնակիցների պարտության սկիզբ հանդիսացան:

2004-ի փետրվարին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում եւս պահպանողականները հաղթանակ տարան: Այդ հաղթանակը բարեփոխականների կողմից բացատրվեց հիմնականում նրանով, որ ընտրացուցակներից հեռացվել էին մի քանի հարյուր բարեփոխիչներ եւ դրանով իսկ սահմանափակվել էր իրանցիների ազատ ընտրության հնարավորությունը:

Սակայն վերջին նախագահական ընտրությունները հանդիսացան վկայությունն այն փաստի, որ բարեփոխումների կողմնակիցներն արդեն իսկ չեն վայելում իրանցի ընտրողների պաշտպանությունը: Չնայած թեկնածուների գրանցման պահին որոշակի խնդիրներ առաջացան բարեփոխիչ թեկնածուների գրանցման հետ կապված, սակայն գլխավոր հավակնորդներ Քյարուբին եւ Մոյինը գրանցվեցին որպես թեկնածուներ, բայց նրանցից եւ ոչ մեկը անգամ երկրորդ փուլ չանցավ: Բարեփոխիչների



պարտության հիմնական պատճառ կարելի է համարել այն, որ նրանք վերջին տարիների ընթացքում ոչ միայն չկարողացան կատարել իրենց խոստումները, այլև նրանցից ոմանք, օգտագործելով իրենց դիրքերը, կարողացան կուտակել հսկայական կարողություններ:

2. Ոչ պակաս անակնկալ կարելի է համարել այն, որ պահպանողականների ճամբարից երկրորդ փուլ անցավ Ահմադինեժադը եւ ոչ թե այլ թեկնածու, ասենք՝ նույն Լարիջանին, որը կես տարի առաջ համարվում էր նախագահական ղեկը զբաղեցնելու հիմնական պահպանողական թեկնածուն:

Չնայած Ահմադինեժադը կոշտ գծի կողմնակից է, այնուամենայնիվ, դասական պահպանողական չէ եւ, ի տարբերություն Իրանի նախկին նախագահների, կրոնական գործիչ չէ: Նրա քաղաքական հայացքներում կրոնական գործոնը զբաղեցնում է բավականին կարեւոր տեղ, սակայն դրա համար չէ, որ իրանցիները քվեարկել են նրա օգտին:

Սոցիալական խնդիրները Ահմադինեժադի նախընտրական ծրագրում զբաղեցնում են կարեւորագույն տեղ, ինչը եւ գերել է սոցիալապես վատ վիճակում գտնվող իրանցիների մեծամասնության սրտերը: Այս հանգամանքը բավականին բարդացնելու է նոր նախագահի իրավիճակը, քանզի սոցիալական սպասելիքները չբավարարելը կարող է առաջ բերել համապատասխան հուզումներ հասարակության լայն շերտերում: Եվ եթե նախկինում երկրում չիրականացվող բարեփոխումների պատճառ դիտվում էին Խաթամին սահմանափակող կրոնավորները, ապա ինքը՝ Նեժադը, հենց այդ կրոնավորների կողմից պաշտպանված թեկնածուն է, եւ ցանկացած սոցիալական լարվածություն կարող է առաջ բերել բնակչության բացասական վերաբերմունքը իշխանական երկու՝ կրոնական եւ նախագահական թեւերի նկատմամբ:

3. Կարելի է պնդել, որ Իրանի նախագահական ընտրությունների արդյունքը որոշակիորեն հանդիսանում է նաեւ ամերիկյան նոր «իրանական քաղաքականության» հետեւանք, որի բաղկացուցիչ մասն են ռազմական ուժի կիրառման հնարավորության քննարկումները ԱՄՆ քաղաքական եւ տեղեկատվական դաշտում: ԱՄՆ հակաիրանական արշավը հանգեցրեց Իրանում իշխանության համախմբմանը, եւ այդ իշխանությունը ԱՄՆ-ին ընդդիմանալու է լավ մշակված եւ համապարփակ ծրագրով: Իհարկե, բարեփոխիչների հեռանալով նվազում է իրանական ընտրանու տակտիկական խուսանավման հնարավորությունը, սակայն

ԱՄՆ-ի հետ հակամարտության սրման պարագայում իշխանության համախմբումն ավելի կարելոր է եւ նշանակալի:

Ի՞նչ փոփոխություններ կարելի սպասել Իրանի քաղաքականության մեջ:

Առաջին հերթին հարկավոր է նշել, որ նախագահն այն անձնավորությունը չէ, ով կարող է կտրուկ փոփոխություններ առաջ բերել Իրանում, քանի որ նախագահի իրավասությունները սահմանափակված են կրոնական իշխանությունների կողմից: Մյուս կողմից՝ նոր նախագահն ավելի շատ հնարավորություններ կունենա փոխել ինչ-որ բան, քանզի նա, ի տարբերություն Խաթամիի, վայելում է հոգեւոր առաջնորդ Խամենեիի աջակցությունը, ինչը հեշտացնում է համապատասխան որոշումների եւ օրենքների ընդունումը:

Նախագահական ընտրություններից հետո Ահմադինեժադի առաջին իսկ մամլո ասուլիսը ցույց տվեց, որ նոր նախագահի նախընտրական դրույթները շատ առումներով նման են մյուս թեկնածուի՝ Ռաֆսանջանիի դրույթներին: Նշենք միայն, որ նոր նախագահը նպատակ ունի անցկացնել տնտեսական բարեփոխումներ, պաշտպանել մարդու իրավունքները, շարունակել բանակցությունները Եվրոպական Միության հետ եւ զարգացնել խաղաղ միջուկային ծրագիրը:

Սակայն նոր զարգացումներ Իրանում, իհարկե, տեղի կունենան: Սոցիալական խոստումներն իրականացնելու համար Ահմադինեժադին հարկավոր է կատարել տնտեսական ռեսուրսի վերաբաշխում Իրանում: Համապատասխան փոփոխություններ տեղի կունենան նախարարյունաբերության ոլորտում, որը վերջին տարիներին բավականին կլանայնացվել է կոռումպացվել է: Նախարարների վերաբաշխման Ահմադինեժադի ծրագրերը կարծես թե վայելում են հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեիի աջակցությունը եւ այդ պատճառով իրագործվելու մեծ հնարավորություն ունեն:

Ահմադինեժադի հաղթանակն էապես չի փոխի Իրանի տարածաշրջանային քաղաքականությունը: Սակայն այս հաղթանակն ավելի է ամրացնում ԱՄՆ հակաիրանական քարոզչության դիրքերը, քանզի հատուկ ծառայությունների նախկին աշխատակից եւ նախկին երիտասարդ հեղափոխական Ահմադինեժադն ավելի խոցելի է «հակաահաբեկչական» քարոզչության համար, քան «քաղաքակրթությունների երկխոսության» արհեստավարժ քարոզիչ Խաթամին:

ԱՄՆ-ի կողմից արդեն իսկ սկսվել է Իրանի նկատմամբ նոր քարոզչական գծի իրականացումը, որով Ահմադինեժադը հավասարեցվում է Սադամ Հուսեյնին եւ Բեն Լադենին: Այս գծի իրականացման

հաջողունը, ի վերջո, կբերի Իրանի նկատմամբ նոր բացասական հասարակական կարծիքի ձեւավորմանը, որն անհրաժեշտ է ԱՄՆ-ին՝ հետագայում հնարավոր ռազմական ակցիա իրականացնելու համար: Մյուս կողմից՝ պահպանողականների հաղթանակը կարող է Իրանի շուրջ էլ ավելի համախմբել հակամերիկյան ուժերին: Նշենք, որ Վենեսուելայի նախագահ Չավեսը միակ արտասահմանյան նախագահն է, ով ոչ միայն հատուկ ուղերձով շնորհավորել է Ահմադինեժադին, այլ նաեւ զանգահարել է նրան եւ խոստացել անձամբ ներկա լինել նրա երդման արարողությանը:

Կովկասյան-կասպյան շրջանում Իրանի քաղաքականությունը մեծ մասամբ չի փոխվի, սակայն կարելի է սպասել որոշակի փոփոխություններ Իրան—Ադրբեջան հարաբերություններում, որը պայմանավորված կլինի Ադրբեջանի տարածքում ԱՄՆ ռազմակայանների հնարավոր տեղակայմամբ: Իրանում հասկանում են, որ Ադրբեջանի հետ ստորագրված համաձայնագիրն այն մասին, թե վերջինս չի տրամադրի իր տարածքը Իրանի նկատմամբ ագրեսիա իրականացնելու համար, զուտ դեկլարատիվ բնույթ ունի: Այս է պատճառը, որ Իրանը կշարունակի կտրուկ դիրքորոշում ցուցաբերել Ադրբեջանում ԱՄՆ ռազմակայանների տեղակայման հարցում, ինչը բացասաբար կազդի իրանա-ադրբեջանական հարաբերությունների վրա:

Ռուսաստանի նախագահին տված պատասխան ուղերձում Ահմադինեժադը նշում է Կասպիցի իրավական կարգավիճակի շուրջ համաձայնության հասնելու անհրաժեշտության մասին, սակայն հասկանալի է, որ այս խնդրում Իրանի հիմնական ընդդիմախոսը լինելու է ոչ թե Ռուսաստանը, որի հետ Իրանը չունի ջրային ռեսուրսների կիսման անմիջական խնդիր, այլ հենց Ադրբեջանը:

Հայ-իրանական հարաբերություններն ունեն կարելու աշխարհաքաղաքական հիմքեր, եւ այս պատճառով Իրանի նոր նախագահի մոտեցումը Հայաստանի նկատմամբ կմնա կառուցողական եւ բարիդրացիական: Մյուս կողմից՝ Հայաստանը պատրաստ պետք է լինի Իրան—ԵՄ հարաբերությունների բարելավմանը, ինչի արդյունքներից մեկը կլինի Իրան—ԵՄ գազամուղի կառուցումը, որի տեխնիկական մանրամասներն արդեն քննարկվում են համապատասխան եվրոպական կառույցներում: Այս գազամուղի աշխարհաքաղաքական նշանակությունը լինելու է հսկայական, եւ կարելու է, որ այն անցնի հենց Հայաստանի տարածքով: Կարելի է ենթադրել, որ Իրանն ինքը շահագրգռված է գազամուղի՝ Հայաստանի տարածքով անցնելով, քանզի իրանցիների համար անցանկալի է թուրքական ճանապարհից օգտվելը, ինչը նշանակալիորեն կուժեղացնի Թուրքիայի դիրքերը տարածաշրջանում:

Ամփոփելով՝ նշենք, որ Իրանում հետագա զարգացումները կախված են ոչ այնքան այդ երկրում տեղի ունեցող գործընթացներից, որքան նրանից, թե ինչպես դրանք կմեկնաբանվեն եւ կօգտագործվեն ԱՄՆ քաղաքական ընտրանու կողմից: Մնում է հուսալ, որ Իրան—ԱՄՆ հարաբերությունների հնարավոր զարգացումները չեն հանգեցնի պատերազմական գործողությունների, որոնք տարածաշրջանի համար կարող են ունենալ աննախադեպ բացասական հետեւանքներ:

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՐԸ**  
**«ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ» ՆԱԽԱԳԾՈՒՄ**  
**Արտակ Շաքարյան**

*«Մեծ Մերձավոր Արեւելք» ամերիկյան նախագիծը հեղինակվել է 2001թ. ահաբեկչական հարձակումներից եւ դրանց հետեւած աֆղանստանյան ու իրաքյան պատերազմներից հետո: Այն ուղղված է լուծելու ԱՄՆ խնդիրները Մերձավոր եւ Միջին Արեւելքում ու Յիուսիսային Աֆրիկայում՝ մահմեդական պետությունների ժողովրդավարացում, ազատականացում, ինչը թույլ կտա Վաշինգտոնին առավել հեշտությամբ հարաբերվել նրանց հետ եւ միջամտել նրանց գործերին:*

**Մոդել երկիր եւ «Ժողովրդավարացման»  
գործընթացի առաջնորդ**

2004թ. հունվարին Սպիտակ տունը հյուրընկալեց Թուրքիայի վարչապետ Էրդողանին: Բուշ-Էրդողան քննարկման հիմնական թեմաներն էին Կիպրոսը, Յիուսիսային Իրաքը, Հայաստանի հետ սահմանի խնդիրը: Խոսվել է նաեւ «Մեծ Մերձավոր Արեւելք» (ՄՄԱ) նախագծի մասին, եւ Էրդողանը, ի տարբերություն Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Թունիսի ու Մարոկկոյի, հայտնել է այդ խնդրում Թուրքիայի աջակցության մասին:

Վերջին ժամանակներս ավելի ու ավելի ցայտուն է երեւում Թուրքիան որպէս չափավոր մահմեդական երկիր ցույց տալու ԱՄՆ ցանկությունը: ՄՄԱ նախագծի գաղափարի բաղկացուցիչ այս մասը, թերեւս, բացատրում է այն հեշտությունը, որով Արդարություն եւ զարգացում կուսակցությունը հաղթանակ տարավ 2002թ. նոյեմբերին կայացած Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում: ԱՄՆ-ը երկար տարիներ ի վեր Թուրքիան ներկայացնում է որպէս իսլամի եւ ժողովրդավարության համակեցության մոդել երկիր, աջակցում նրա մուսուլման Եվրամիություն՝ ձգտելով ցույց տալ մահմեդական աշխարհին, որ իսլամն ու արեւմտյան արժեքները համատեղելի երեւույթներ են: ԱՄՆ նախագահ Բուշի 2004թ. հունվարի 20-ի ելույթից հետո, որը վերաբերում էր հենց ՄՄԱ նախագծին, ամերիկյան պաշտոնյաներն անմիջապէս հայտարարեցին, թէ այստեղ Թուրքիան ունի «հանգուցային» դեր: Նույնը ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը կրկնեց 2004թ. հունիսի 25-ին թուրքական NTV հեռուստաալիքին տված իր հարցազրույցում:

Նախագահ Բուշի վերընտրությունից հետո կասկած չկար, որ ԱՄՆ ռազմավարությունն այդուհետ կենտրոնանալու էր հիմնականում մահմեդական աշխարհի վրա, իսկ ԱՄՆ հիմնարար շահերից բխում էր աջակցել թուրքիային քաղաքական, սոցիալական, տնտեսական բարեփոխումներում, ԵՄ լիիրավ անդամակցության հարցում, Կիպրոսի խնդրում, քանի որ եթե թուրքիան անհաջողության մատնվի արդիականացման գործընթացում, ապա դա կլինի նաեւ ՄՍԱ ամերիկյան նախագծի ձախողման սկիզբը:

Այսօր թուրքիան աշխարհին ներկայանում է ոչ որպես ԱՄՆ կամակատար, այլ ինքնուրույն, երբեմն Վաշինգտոնի շահերին հակասող քաղաքականություն վարող դերակատար: Հենց սա է պետք Վաշինգտոնին, որպեսզի թուրքիան կարողանա տարածաշրջանում առաջնորդի կարգավիճակի ձգտել՝ ի հակակշիռ Իրանի կամ Սիրիայի: Այս պարագայում Իսրայելը «խաղից դուրս» է, քանի որ տարածաշրջանի միակ երկիրն է, որ մահմեդական չէ: Կա նաեւ կարծիք, թե հենց հանուն այս գաղափարի Վաշինգտոնի «պատվերով» թուրքիայում իշխանության բերվեց իսլամամետ ԱԶԿ-ն, որպեսզի Անկարան ավելի մերձենա մահմեդական աշխարհին ու հնարավոր լինի թուրքիան անվանել «օրինակելի իսլամական երկիր, որն առաջնորդվում է ժողովրդավարությամբ»: ԱՄՆ-ը ընդունեց Էրդողանին Վաշինգտոնում, երբ նա դեռ ո՛չ վարչապետ էր, ո՛չ էլ նույնիսկ խորհրդարանի պատգամավոր:

Զնայած թուրքիան, ըստ սահմանադրության, աշխարհիկ երկիր է, Վաշինգտոնի բարձրաստիճան գործիչները քանիցս այն անվանել են մահմեդական երկիր, որը հաջողությունների է հասնում ժողովրդավարության շնորհիվ: Թեպետ թուրքիան առարկել է, այնուամենայնիվ, այդ «վրիպակները» շարունակվել են, ինչը ցույց է տալիս, որ դրանք ամենեւին էլ պատահական խոսքեր չեն, այլ կազմում են մի ընդհանուր ծրագրի բաղադրամաս: Հայտնի քաղաքագետ Ս.Հանտինգտոնը նույնպես իր վերլուծություններում առաջ է քաշում այն միտքը, որ թուրքիան պետք է հրաժարվի ԵՄ անդամակցության գործընթացից եւ ընտրի մահմեդական աշխարհի առաջնորդ դառնալու ուղին:

\* \* \*

2005թ. հունվարի 31-ին Անկարա այցելեց ԱՄՆ պաշտպանության նախարարի խորհրդական, Պենտագոնում երրորդ անձ Դուգլաս Ֆեյթը, որը հանդիպումներ ունեցավ թուրքիայի վարչապետ Էրդողանի, Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Ալփողանի եւ այլ բարձրաստիճան անձանց հետ: Ֆեյթը հայտարարեց, որ իրենք ցան-

կություն ունեն աջակցել Թուրքիային՝ դառնալու տարածաշրջանում միջուկային զենքերի վերահսկողության նախաձեռնության առաջնորդ՝ թերեւս ակնարկելով Իրանը:

Մայիսի սկզբին Իսրայելի նախագահ Մոշե Կացավի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտնեց, որ կիսում է Իրանի միջուկային ծրագրի կապակցությամբ Իսրայելի մտահոգությունները. «Իրանի միջուկային ծրագիրը սպառնում է ողջ աշխարհին, եւ Իսրայելը Թեհրանի միջուկային սպառնալիքներին դեմ-հանդիման կանգնած միակ երկիրը չէ»:

2005թ. հունիսի 8-ին տեղի ունեցավ Թուրքիայի վարչապետ Էրդողանի այցը Վաշինգտոն: Թուրքական շատ թերթեր այն բնութագրեցին որպէս «նոր էջ երկկողմանի հարաբերություններում»: Այցի հիմնական շեշտադրումը ՄՄԱ նախագիծն էր եւ Թուրքիային վստահվելիք դերակատարումը: Հանդիպման ժամանակ նախագահ Բուշը մեծապէս կարելորեց թուրքական ժողովրդավարության նշանակությունը տարածաշրջանում «առաջնորդություն» ստանձնելու հարցում, ինչպէս նաեւ թուրքամերիկյան ռազմավարական հարաբերությունները: Էրդողանն, իր հերթին, Բուշին հայտնեց Թուրքիայի աջակցությունը ՄՄԱ նախագծին:

Բուշի հետ հանդիպումից հետո մամլո ասուլիս հրավիրած Էրդողանի առանձնացրած կետերից առավել աչքի ընկավ ՄՄԱ նախագծում Թուրքիայի ստանձնած առաջնորդության դերի «առաջին հանձնարարականների» նախանշումը: Դրանք են զանգվածային ոչնչացման միջուկային զենքերի տարածման դեմ վերահսկողության սահմանումը (ակնարկվում է Իրանը — *Ա.Շ.*), բազմակուսակցական համակարգի հիմնումը (ակնարկվում է Սիրիան — *Ա.Շ.*): Սիրիային ուղղված կոչերը շարունակվեցին «Նյու Յորք Թայմս» թերթին տրված հարցազրույցում, որտեղ Թուրքիայի վարչապետը, ակներեւորեն արդեն իր նոր դերի մեջ մտնելով, կոչ արեց Սիրիային վարչակարգի հարցում օրինակ վերցնել Թուրքիայից:

Իրանի պարագայում նույնպէս զարգացումները երկար չսպասեցրին: Արդեն հունիսի 14-ին Անկարայում ԱՄՆ դեսպան Էրիք Էդելմանն ու Թուրքիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ, դեսպան Ալի Թույգանը ստորագրեցին զանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքարի վերաբերյալ պայմանագիր: Սա քայլ էր՝ արված տարածաշրջանում Անկարայի հակամիջուկային վերահսկիչի նոր դերի ստանձնման ուղղությամբ, ինչպէս 2005թ. սկզբին խոստացել էր Դուգլաս Ֆեյթը:

Բուշ—Էրդողան հանդիպումից մի քանի օր անց ի հայտ եկան ՄՄԱ նախագծի շրջանակներում Թուրքիայի արած առաջին հստակ քայլերը:

Յունիսի 16-17-ին Բեյրութում տեղի ունեցավ արաբական տնտեսական 11-րդ համաժողովը, որին, 30 երկրների մոտ հազար պատվիրակների թվում, մասնակցեց նաև Թուրքիայի վարչապետ Էրդողանը, որն իր ելույթում Թուրքիան բնորոշեց որպես «հաջողության մոդել»: Ինչպես արտահայտվեց նա Լիբանանի վարչապետի հետ հանդիպման ժամանակ, «Թուրքիան պատրաստ է ամեն տեսակի օգնության ու ներդրման ՄՄԱ նախագծի շրջանակներում»:

ՄՄԱ շրջանակներում կազմակերպված միջոցառումներից էր հունիսի 20-21-ին Ստամբուլում տեղի ունեցած «Հասարակական կյանքին կանանց մասնակցության աջակցություն եւ Մեծ Մերձավոր Արեւելքի ու Յյուսիսային Աֆրիկայի ժողովրդավարացում» միջազգային համաժողովը, որին ներկա էին 90 մասնակից տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներից: Այն կազմակերպվել էր «Ժողովրդավարության աջակցման երկխոսություն» կազմակերպության կողմից, որի համանախագահներն են Թուրքիան, Իտալիան ու Եմենը: Այս կազմակերպությունը ձեւավորվել է «Մեծ ութնյակի» 2004թ. հունիսյան գագաթաժողովի ժամանակ եւ կոչված է աջակցելու «Մեծ ութնյակի» եւ տարածաշրջանի երկրների համակողմանի համագործակցությանը:

### **Չետելություններ**

Ակներեւ է, որ Թուրքիան քայլեր է կատարում դեպի մերձավորարեւելյան ավելի ակտիվ քաղաքականություն:

Կարգավորելով հարաբերությունները Իրանի, Սիրիայի եւ ընդհանրապես արաբական աշխարհի հետ՝ Անկարան իրեն պատրաստ է զգում Արեւմուտքի աջակցությամբ ստանձնել «Ժողովրդավարացման» առաջնորդի դերը Մեծ Մերձավոր Արեւելքում:

Սակայն Աֆղանստանում ու Իրաքում ԱՄՆ կողմից պարտադրվող ժողովրդավարական ծրագրերի տխուր վիճակը հուշում է Թուրքիային, որ նմանօրինակ բռնի գործընթացում առաջնորդի դիրք ունենալը կարող է զրոյի հավասարեցնել արաբական աշխարհի հետ հարաբերությունների բարելավմանն ուղղված վերջին մի քանի տարվա ջանքերը: Ուստի, Անկարան կծգտի այս նախագծի շրջանակներում գործողությունների առավել ազատության ու կփորձի ինքն ուղղորդել տարածաշրջանի ժողովրդավարացման ջանքերը:



**ԻՍՐԱՅԵԼ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ՍՓՅՈՒՌՔ  
ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
Կարեն Վերանյան**

Յրեական սփյուռքի հայրենադարձության խնդիրը սիոնիզմի հոգեւոր գաղափարախոսության առանցքային կետերից մեկն է: 1948թ. Իսրայելի պետության ստեղծումով հրեաների զանգվածային հայրենադարձությունը դարձավ իրականություն:

Յայրենիք—սփյուռք հարաբերությունների ամրապնդումը համարվում է Իսրայելի պետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից: Երկրի կառավարությունը զգալի կարեւորություն է տալիս հրեա սփյուռքի հայրենադարձության հարցին՝ որպէս Իսրայելի պետականության պահպանման ու ամրապնդման երաշխիքի:

**«Վերադարձի մասին» օրենքը եւ դրա հետեւանքները**

1950թ. հուլիսի 5-ին Երկրի խորհրդարանը (Բնեսեթ) միաձայն ընդունեց «Վերադարձի մասին» օրենքը, ինչը հիմք դրեց սիոնիստական գաղափարախոսության իրավական հիմքի ամրագրմանը: Օրենքը իրավունք էր տալիս Իսրայելի սահմաններից դուրս բնակվող հրեաներին, վերադառնալով հայրենիք, ստանալ Իսրայելի քաղաքացիություն: Յետագա տասնամյակներում հայրենադարձության մասին օրենքի կիրառության շրջանակները բավականին ընդլայնվեցին: Մասնավորապէս, 1970թ. ընդունվեցին «Վերադարձի մասին» օրենքի փոփոխությունները, որոնք իրավունք էին ընձեռում հայրենադարձվել նաեւ այն անհատներին, որոնք ազգակցական կապեր ունեն հրեաների հետ՝ հրեայի անուսին, հրեայի երեխաներ, թոռներ:

Իսրայելի պետության հռչակումից հետո՝ առաջիկա 3-5 տարիների ընթացքում, հայրենադարձությունը զանգվածային բնույթ ստացավ, մասնավորապէս, ի հաշիվ Եվրոպայից, Մերձավոր Արեւելքի ու Յիւսի-սային Աֆրիկայի երկրներից հրեա սփյուռքի հայրենադարձության:

1960-ական թթ. վերջին հայրենադարձների քանակային կտրուկ աճի արդյունքում անհրաժեշտություն առաջացավ վերանայել հայրենադարձության վերաբերյալ նախկինում գործող մեխանիզմները: 1967թ. ստեղծվեց հայրենադարձության ու ինտեգրման տեսչությունը, որը

կոչված էր կոորդինացնելու Իսրայելի կառավարության ու Հրեական գործակալության (եբրայերեն՝ «Սոխնուտ» - գործակալությունը զգալի աշխատանքներ է իրականացրել հրեական սփյուռքի հայրենադարձության հարցում) աշխատանքները: Իսկ 1968թ. որոշում ընդունվեց հիմնել ինտեգրման նախարարություն: Ընդ որում, պայմանավորվածություն ձեռք բերվեց Հրեական գործակալության հետ, որ վերջինս զբաղվեր դեպի երկիր հայրենադարձների ապահովմամբ, իսկ նորաստեղծ նախարարությունն իր վրա էր վերցնում երկրում հայրենադարձների կենսապայմանների ապահովման խնդիրները:

1990-ական թթ. սկզբին Իսրայելի բնակչությունը համալրվեց նոր հայրենադարձների զանգվածային ալիքով: Սա գլխավորապես պայմանավորված էր Խորհրդային Միության փլուզմամբ, հետխորհրդային տարածքում նորանկախ հանրապետությունների ձևավորմամբ: Միայն 1990-1996թթ. ԱՊՀ տարածքից Իսրայել վերադարձավ ավելի քան 600 հազ. հրեա:

Հայրենադարձությամբ Իսրայելի ղեկավարությունը կարողացավ ոչ միայն ամրապնդել հայրենիք—սփյուռք հարաբերությունները, այլև օգտագործել այն՝ երկրի ներքին խնդիրների կարգավորման տեսանկյունից:

Նախ՝ աշխարհասփյուռ հրեաների հայրենադարձության ապահովումը զգալի դեր ունեցավ Իսրայելի գիտակրթական, գիտահետազոտական ներուժի համալրման ու զարգացման հարցում:

Երկրորդ՝ հայրենադարձության քաջալերմամբ Իսրայելի ղեկավարությունը ձգտում է նպաստել երկրի պաշտպանունակության բարելավմանը եւ, մասնավորապես, ապահովել երկրի պաշտպանական ու անվտանգության մարմինների անձնակազմի համալրումը:

Երրորդ՝ երկքաղաքացիության ընդունումը հնարավորություն է ընձեռում զգալիորեն համալրել Իսրայելի պետական բյուջեի արտաքին տրանսֆերտների մասնաբաժինը:

Չորրորդ՝ հայրենադարձության խնդրի ապահովումը Իսրայելի կառավարությունը կարելորում է նաեւ երկրի ժողովրդագրական նկարագրի տեսանկյունից: Վերջին տարիներին մասնավորապես հրեական լրատվամիջոցները հեղեղված են հաղորդագրություններով, թե երկրի հրեա բնակչությունը քանակային առումով աստիճանաբար սկսում է դիրքերը զիջել արաբ բնակչությանը, որն առանձնանում է ժողովրդագրական աճի բարձր ցուցանիշներով:

Հրեական սփյուռքի հայրենադարձությունն իր հետ բերեց նաեւ ժողովրդագրական նոր խնդիրներ: «Վերադարձի մասին» օրենքում տեղ

գտած փոփոխությունների հիման վրա Իսրայել են ներգաղթում հրեաների հետ հեռավոր «ազգակցական» կապեր ունեցող մարդիկ, որոնց շարքում, իրականում, քիչ չեն այլազգիներն ու այլադավանները: Ավելին, վերջին ժամանակներս բավական ակտուալ է դարձել Իսրայելից տեղացի (ոչ հայրենադարձվածների) հրեա բնակչության արտագաղթի (մասնավորապես՝ ԱՄՆ ու Արեւմտյան Եվրոպայի երկրներ) հարցը:

2003թ. վիճակագրությամբ հրեա բնակչությունը կազմում էր Իսրայելի ողջ բնակչության (6.7 մլն) մեծամասնությունը՝ շուրջ 5.4 մլն (81%), իսկ այլազգիները՝ գերազանցապես արաբներ, 1.3 մլն (19%): Հրեական աղբյուրների համաձայն, 1948թ. նույնպես հրեաները երկրի բնակչության 81% էին, ասել է թե՛ Իսրայել հրեաների վերադարձը ոչ թե համալրում է Իսրայելի բնակչությունը, այլ լրացնում է նրա աստիճանական նվազեցումը՝ ի հաշիվ տեղացի հրեաների:

### **Գլոբալ վերափոխումները եւ հրեական համայնքները**

Խորհրդային Միության փլուզումը նոր տեղաշարժերի պատճառ հանդիսացավ գլոբալ աշխարհակարգում եւ, մասնավորապես, հետխորհրդային տարածքում: Հետխորհրդային պետությունների ձեւավորումը, ինչպես նաեւ եվրասիական տարածաշրջանում ընթացող ռազմավարական-քաղաքական զարգացումներն էական ազդեցություն ունեցան նաեւ մերձավորարեւելյան տերության՝ Իսրայելի արտաքին քաղաքականության վրա՝ մի քանի հիմնական պատճառներով:

Նախ՝ հետխորհրդային տարածքում նոր պետությունների առաջացումը Իսրայելի առջեւ հնարավորությունների լայն դաշտ բացեց ներգրավվելու տարածաշրջանային զարգացումներում:

Երկրորդ՝ 2001թ. սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչությունը նոր լարվածություն հաղորդեց եվրասիական տարածաշրջանային զարգացումներին. զգալիորեն մեծացավ լարվածությունը իրանա-իսրայելյան, իրանա-ամերիկյան հարաբերություններում:

Երրորդ՝ Հեռավոր Արեւելքում օրեցօր հզորանում է Չինաստանը: Իսրայելի կառավարությունը մեծ նշանակություն է տալիս չինա-իսրայելական հարաբերությունների զարգացմանը: Ավելին, վերջին տարիներին Միացյալ Նահանգների քաղաքական անհաջողությունները (առաջին հերթին՝ իրաքյան ռազմարշավը) Իսրայելի կառավարության առջեւ բարձրացնում են, ի դեմս Չինաստանի, ԱՄՆ-ին այլընտրանք հանդիսացող ռազմավարական նոր դաշնակցի ձեռքբերման հարցը:

Նշենք, որ պաշտոնական Վաշինգտոնը բավական խանդոտ է մոտե-

նում չինա-իսրայելական ռազմական համագործակցությանը: Վերջերս Պենտագոնը նույնիսկ դադարեցրեց Իսրայելի հետ համագործակցությունը՝ F-35 տեսակի ռմբակոծիչի ստեղծման ծրագրի շուրջ, ի պատասխան Չինաստանի հետ իսրայելական պաշտպանական ձեռնարկությունների համագործակցության հաստատման: Նկատենք, որ Ռուսաստանից հետո Իսրայելը համարվում է Չինաստանին ռազմական սարքավորումներ մատակարարող երկրորդ պետությունը: Ավելին, 2003թ. միայն առաջին կիսամյակում Չինաստանի ու Իսրայելի միջև ապրանքաշրջանառությունը կազմել է շուրջ \$500 մլն: Թեև այն ավելի քան 18 անգամ զիջում է Իսրայել—ԱՄՆ ապրանքաշրջանառության տարեկան ծավալներին, այդուհանդերձ, չինա-իսրայելյան տնտեսական համագործակցությունն ունի զարգացման մեծ հեռանկարներ (առաջին հերթին՝ բարձր տեխնոլոգիաների ասպարեզում):

Եվ չորրորդ՝ Խորհրդային Միության փլուզումը հանգեցրեց հետխորհրդային հրեական համայնքների նկատմամբ Իսրայելի քաղաքականության վերանայմանը: Արդյունքում՝ տեղի հրեական համայնքներն ընդունեցին որակապես նոր գործառույթային ձեւաչափեր, ստեղծվեցին Իսրայել—հետխորհրդային հրեական համայնքներ փոխհարաբերությունների առավել արդյունավետ մեխանիզմներ, որոնք ի վիճակի կլինեն համարժեք արձագանքել տարածաշրջանային զարգացումներին, պաշտպանել տարածաշրջանում Իսրայելի ազգային շահը:

Իսրայելի կառավարությունը, շարունակելով ողջունել ԱՊՅ տարածքից հրեական համայնքների ներկայացուցիչների հայրենադարձությունը, միեւնույն ժամանակ էապես կարելորում է տեղի հրեական համայնքների առկայությունը՝ նրանց դիտարկելով որպես տվյալ երկրում եւ տարածաշրջանում իր պետական շահերի հետապնդման գլխավոր տարրերից մեկը:

Ավելին, Իսրայելի պետության առջև ծագել էր եվրասիական տարածաշրջանում գործող հրեական կազմակերպությունների ու համայնքների նկատմամբ երկրի վարած քաղաքականությանն առավել նպատակաուղղվածություն տալու խնդիրը: Արդյունքում՝ 2002թ. մարտի 5-ին հիմնադրվեց «Եվրասիական հրեական կոնգրեսը» (ԵՂԿ), որի նախագահ ընտրվեց Ղազախստանի խոշոր հասարակական գործիչ, գործարար Ալեքսանդր Մաշկեւիչը:

ԵՂԿ նախագահի պաշտոնում ղազախստանցի հասարակական գործիչ նշանակումը խորհրդանշական է այն առումով, որ նորաստեղծ հրեական կազմակերպության կողողինացիոն կենտրոն ընտրվել է հենց Ղազախստանը: Վերջինս աշխարհագրական տեսանկյունից ունի կարելոր ռազմավարական նշանակություն: Իսրայելը, ունենալով բավական սուղ

բնական ռեսուրսներ, մեծ նշանակություն է տալիս Ղազախստանի եւ ողջ կասպյան տարածաշրջանի նավթագազային պաշարներին:

ԵՅԿ-ն կոչված է կոորդինացնելու ԱՊՅ անդամ բոլոր երկրներում, ինչպես նաեւ Բուլղարիայում, Մոնղոլիայում, Ճապոնիայում, Յնդկաստանում, Ավստրալիայում եւ Նոր Զելանդիայում գործող հրեական կազմակերպությունների ու համայնքների (ըստ որոշ տվյալների՝ վերոնշյալ երկրների տարածքում ներկայումս բնակվում են շուրջ 2 մլն հրեա) աշխատանքները:

**«ԱՊՅ եւ բալթյան երկրների հրեաների բյուրո»**

Չեխոսլովակիայի տարածաշրջանային զարգացումները գտնվում են նաեւ Իսրայելի հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում: Ըստ մի շարք լրատվամիջոցների, ԱՊՅ որոշ երկրներում Իսրայելի հատուկ ծառայություններն ակտիվ գործունեություն են ծավալում Իրանի դեմ: Մասնավորապես, պաշտոնական Թեհրանը մեկ անգամ չէ, որ դժգոհություն է հայտնել Բաքվի իշխանություններին՝ Իրանի դեմ Ադրբեջանում իսրայելյան ռադիոլուկացիոն համակարգի ստեղծման, ինչպես նաեւ Ադրբեջանի տարածքից «Մոսադի» հետախուզական գործունեության կապակցությամբ:

Չեխոսլովակիայի տարածաշրջանում ակտիվ գործունեությամբ մասնավորապես առանձնացել է «ԱՊՅ եւ բալթյան երկրների հրեաների բյուրոն»՝ «Նաթիվը» (նախկինում գործակալությունը կրում էր «ԽՍՀՄ եւ Արեւելյան Եվրոպայի հրեաների հարցերով զբաղվող բյուրո» անվանումը): Բյուրոյի ստեղծման մասին համաձայնությունը 1951թ. տվել է Իսրայելի առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնը: Պետք է ասել, որ բյուրոն ի սկզբանե ուներ նախկին ԽՍՀՄ-ում հետախուզական գործունեություն, սիոնիստական քարոզչություն ծավալելու առաքելություն:

Խորհրդային Միության փլուզումից հետո, ըստ էության, վերափոխվեցին նաեւ «Նաթիվի» գործունեության ուղղություններն ու հիմնական նպատակները:

Նկատենք, որ վերջին տասնամյակում հեխոսլովակիայի տարածքում «Նաթիվի» գործունեության վերաբերյալ Իսրայելի պետական որոշ մարմիններում եւ հատկապես անվտանգության կառույցներում, ընդհանուր առմամբ, առկա է որոշակի բացասական դիրքորոշում: Մասնավորապես, Չրեական գործակալությունն ու Իսրայելի ԱԳՆ-ն գտնում են, որ խորհրդային կարգերի փլուզման, ԱՊՅ տարածքից հայրենադարձության նվազեցման պատճառով անհիմաստ է դառնում «Նաթիվի» գործունեու-

թյունը: Սա, թերեւս, պայմանավորված է հետխորհրդային տարածքում գործունեության առաջատարության հարցում Իսրայելի հատուկ ծառայությունների միջեւ առկա տարածայնություններով: Լուրեր են պտտվում նաեւ հետխորհրդային տարածքում «Նաթիվի» իրականացրած հետախուզական գործունեությունը «Մոսադի» իրավասությանը հանձնելու մասին: Այդ առումով ուշագրավ է 1998թ. ապրիլի վերջին իսրայելական «Չաարեց» թերթի այն հրապարակումը (հիմնված այդ երկրի ԱԳՆ-ից ստացված անանուն տեղեկատվության վրա), ըստ որի՝ չնայած Իսրայելի այդ ժամանակվա վարչապետ Բենիամին Նաթանյահուի ցուցումին, «Նաթիվը», այնուամենայնիվ, շարունակում էր ԱՊՅ երկրներում զբաղվել գաղտնի տեղեկատվության հավաքագրմամբ:

Զնայած իր գործունեության սահմանափակմանը, «Նաթիվի» աշխատակիցները ԱՊՅ տարածքում այսօր եւս զբաղվում են հրեական համայնքների երիտասարդ կադրերի հավաքագրմամբ, տեղի գիտնականների ու մասնագետների հետ կապերի հաստատմամբ: Որոշ լրատվամիջոցների տվյալներով, բյուրոն միաժամանակ զբաղվում է հետխորհրդային երկրների ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաեւ հասարակական իրադրության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմամբ: Այս առումով, թերեւս, զգալի է «Նաթիվի» համակարգում գործող «Վերլուծության եւ հետախուզության բաժնի» դերակատարումը:

Նկատենք, որ վերջին ժամանակներս հետխորհրդային հրեաների արտագաղթի միտում է նկատվում դեպի Արեւմուտք (մասնավորապես՝ Գերմանիա եւ ԱՄՆ): Ելնելով այս հանգամանքից՝ «Նաթիվի» ղեկավարությունը, Իսրայելի կառավարությունից ստանալով համապատասխան լիազորություններ, նախատեսում է գործունեության դաշտի մի մասն ուղղել դեպի ԱՄՆ ու Գերմանիայի խոշոր հրեական համայնքներ:

**ԻՍԼԱՄԻ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ  
Արաքս Փաշայան**

2005թ. հուլիսի 7-ին Լոնդոնում իրականացվեցին չորս պայթյուններ՝ մետրոյի կայարաններում եւ հասարակական ավտոբուսում. կան 50-ից ավելի զոհեր եւ շուրջ 700 վիրավորներ: Դրան անմիջապես հետեւեց անգլիացիների պատասխան ռեակցիան. երկրի տարբեր քաղաքներում տեղի ունեցան հարձակումներ մզկիթների եւ իսլամական մշակութային կենտրոնների վրա՝ ուղեկցված մահմեդականների նկատմամբ բռնություններով:

Մեծ Բրիտանիայում վերջին ահաբեկչությունը տեղի էր ունեցել 1988թ.: Մինչեւ այժմ այս երկրին հաջողվել էր իր տարածքում խուսափել իսլամական ահաբեկչությունից, չնայած ներգրավվածությամբ իրաքյան պատերազմին: Մեծ Բրիտանիան համարվում է իսլամական աշխարհի քաղաքական եւ մտավոր կարեւոր կենտրոն, որտեղ իրատարակվում են արաբական-իսլամական աշխարհում բավական ազդեցիկ եւ հեղինակավոր ավելի քան 50 առաջատար թերթեր ու ամսագրեր, գործում են հայտնի մի շարք կազմակերպություններ (որոնցից շատերն ունեն արմատական կեցվածք), հազարավոր մզկիթներ:

Ահաբեկչությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Շոտլանդիայում սկսվել էր Մեծ ութնյակի երկրների գագաթաժողովը: Մինչ այդ, հուլիսի 6-ին, Միջազգային օլիմպիական հանձնաժողովը 2012թ. անցկացվելիք օլիմպիական խաղերի կազմակերպումը հանձնարարել էր Լոնդոնին, ինչը հիմնավորվել էր Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում անվտանգության կայուն եւ ուժեղ համակարգի առկայությամբ: Մինչդեռ ահաբեկիչները նպատակ ունեին ապացուցել, որ Մեծ Բրիտանիան ամենեւին էլ անհաղթահարելի պատմեջ չէ:

Լոնդոնի ահաբեկչությունը, ինչպես եւ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի փորձը ցույց են տալիս, որ լավագույն ուստիկանական կառույցներն ու անվտանգության համակարգերը դեռեւս ի զորու չեն ապահովել հուսալի պաշտպանություն: Ի դեպ, Մեծ Բրիտանիան արդեն մշակել է հակաահաբեկչական ռազմավարություն «Contest» խորագրով, որ ներառում է չորս ուղղություններ՝ կանխարգելում, հետապնդում, պաշտպանություն եւ պատրաստվածություն:

Ահաբեկչության պատասխանատվությունն իր վրա վերցրեց մինչ այդ անծանոթ «Եվրոպայի ալ-Կաիդա գաղտնի խմբավորումը»: Կասկածից վեր է, որ ահաբեկչությունը նաեւ ուղղված էր Իրաքում Մեծ Բրիտանիայի ռազմական ներկայությանը: Իսլամիստական մի կայքում կազմակերպության տարածած հայտարարության մեջ մասնավորապես նշված է. «Ով, իսլամի ժողովուրդներ, ով, արաբ ժողովուրդներ: Ուրախացե՛ք, քանի որ եկավ խաչակիրների բրիտանական-սիոնիստական կառավարությունից վրեժխնդիր լինելու ժամն այն ջարդերի համար, որ Բրիտանիան սարքեց Իրաքում եւ Աֆղանստանում: Հերոս մոջահիդներն իրականացրին Լոնդոնի օրհնյալ հարձակումը: Բրիտանիայի հյուսիսային, հարավային, արեւմտյան եւ արեւելյան հատվածներում բորբոքվում են վախը, սարսափը եւ խուճապը»:

Եվրոպայում ահաբեկչության կանխատեսման առումով ուշագրավ է դեռեւս 2005թ. ապրիլի 27-ին Հետախուզության եւ անվտանգության գծով ռազմավարական հետազոտությունների եվրոպական կենտրոնի (ESISC) գլխավոր քարտուղար Կլոդ Մոնիկայի *«Մահմեդական երիտասարդության արմատականացումը Եվրոպայում. իրականություն եւ սպառնալիքի մասշտաբը»* խորագրով զեկույցը ԱՄՆ Կոնգրեսի Միջազգային հարցերով հանձնախմբում: Ձեկուցողը նշել էր, որ իսլամական ծայրահեղականության վտանգը Եվրոպայում շատ իրական է թե՛ քաղաքական, թե՛ ահաբեկչական առումով: Նրա կարծիքով՝ իսլամական արմատականության տեսանկյունից ամենապայթուցավտանգ երկրներն են Ֆրանսիան, Բելգիան, Նիդեռլանդները, Իտալիան, Մեծ Բրիտանիան եւ Գերմանիան, որտեղ մահմեդականները մեծ թիվ են կազմում:

Ընդհանրապես, իսլամը Եվրոպայում խոր արմատներ ունի: Արեւմտյան Եվրոպայում կենտրոնացած է աֆրո-ասիական ծագում ունեցող մահմեդական հանրություն, ինչի արդյունքում ձեւավորվել է սոցիալ-մշակութային ավանդույթների մի նոր որակ: Եվրոպայում մահմեդական էմիգրացիան, որ առավել ակտիվացավ 1960-70-ականներին, հիմնականում ունեցել է սոցիալ-տնտեսական շարժառիթ: Միաժամանակ, 1980-ականների վերջերից իսլամական արմատական շարժումների մի շարք ակտիվիստներ ու առաջնորդներ, որպես այլախոհներ, ապաստան գտան Եվրոպայում:

Եվրոպայում մահմեդականությունը բազմատարր է: Օրինակ՝ Ֆրանսիայում մահմեդականների մեծ մասն ունի ալժիրյան ծագում, իսկ, ասենք, Մեծ Բրիտանիայում մահմեդականների մեջ գերակշռում են Պակիստանից ու Բանգլադեշից ներգաղթածները:



Չնայած մահմեդական էմիրանտներից շատերը ժամանակի ընթացքում հարմարվել են նոր միջավայրին, սակայն այսօր նրանց զգալի մասը լուրջ խնդիր ունի եվրոպական հանրության հետ ինտեգրվելու՝ կապված բազմաթիվ խոչընդոտների հետ: Էմիրանտը հատկապես աշխատանք գտնելու հարցում ենթարկվում է խտրականության, ինչը հանգեցնում է նրա մեկուսացմանը: Վերապրելով հոգեբանական անհարմարություն՝ մահմեդական էմիրանտը աստիճանաբար դառնում է եվրոպական սոցիումի համար օտար տարր: Արեւմտյան ժողովրդավարական արժեքների համատեքստում մահմեդական երիտասարդությունն իրեն զգում է օտար, ոչ պիտանի եւ ոչ համահունչ իրեն շրջապատող իրականությանը: Այս հանգամանքը բերում է տեղացիների հետ հնարավոր շփումների նվազմանը, սեփական էթնիկական խմբի հետ առավել մերձեցմանը: Ինտեգրման դժվարությունը հանգեցնում է իսլամական *ումմայի* պատկանելու գիտակցության ամրապնդմանը եւ առանձին դեպքերում՝ իսլամական ծայրահեղականության ի հայտ գալուն:

Եվրոպայում իսլամական հանրությունն աչքի է ընկնում իր էթնոդավանական խայտաբղետ կազմով: Եվրոպական մահմեդականության մեջ ներկայացված են իսլամական տարբեր ուղղություններ, ներառյալ սուֆիականություն, սալաֆիականություն, ավանդական իսլամ, սուննիական եւ շիական որոշ աղանդներ:

Թեեւ մահմեդական առանձին խմբեր ունեն որոշակի էթնոդավանական հետաքրքրություններ ու շահեր, սակայն նրանց համար իսլամը մնում է որպես միավորիչ գործոն: Ասվածի ապացույցն է այն, որ այսօր Եվրոպայի մահմեդականները, անկախ էթնիկ պատկանելությունից, անզիջում պայքարում են, որպեսզի կրթական հաստատություններում աղջիկները *հիջաբ* կրելու թույլտվություն ստանան:

Արեւմուտքի թե՛ քաղաքական եւ թե՛ ռազմական միջամտությունն իսլամական աշխարհին առնչվող հարցերին, արեւմտյան լրատվամիջոցներով հակաիսլամական քարոզչությունը, աջակցությունն Իսրայելին, իսլամի աշխարհի տեսանկյունից խորթ արեւմտյան արժեքների ներդրման փորձն իսլամական աշխարհում՝ Եվրոպայի մահմեդական համայնքներում ավելի են խորացնում Արեւմուտքի նկատմամբ առկա անհանդուրժողականությունը՝ հանգեցնելով իսլամական ծայրահեղականության: Առանձին դեպքերում եվրոպական մզկիթներում հնչում են ատելությանը լի աղոթքներ: Այն դպրոցներում, ուր հաճախում են մահմեդականներ, ավելի դժվար է դառնում դասավանդել որոշ առարկաներ կամ թեմաներ (օր.՝ հոլոքոստի պատմություն): Եվրոպայի

համալսարաններում գործում են իսլամական շարժումների բջիջներ՝ «Մահմեդական եղբայրների», «Հիզբալլահի», «Համասի», ալժիրյան, թունիսյան կամ մարոկկոյական կազմակերպությունների նմանությամբ: Եվրոպայի իսլամիստները հանդես են գալիս կրոնաքաղաքական կազմակերպությունների եւ շարիաթական դատարանների ստեղծման օգտին:

Եվրոպական բանտերում նկատվում է իսլամական տարրի գերակայություն: Սեպտեմբերի 11-ից հետո ահաբեկչության մեջ կասկածվելու համար ձերբակալվել են հարյուրավոր մահմեդականներ Ֆրանսիայում, Բելգիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Նիդեռլանդներում: Սեպտեմբերի 11-ից ի վեր Եվրոպայում կանխվել են շուրջ քսան խոշոր ահաբեկչական հարձակումներ: Սակայն երկուսն իրականացվել են հաջողությամբ՝ 2004թ. մարտի 11-ի ահաբեկչությունը Մադրիդում եւ հոլանդացի ռեժիսոր Թեո վան Գոգի սպանությունը Ամստերդամում 2004թ. նոյեմբերի 2-ին:

Ֆրանսիական ներքին հետախուզական ծառայությունը հետաքրքիր բանաձեւ է մշակել՝ գնահատելու իսլամական սպառնալիքի ստույգ մասշտաբները: Ֆրանսիայի օրինակով՝ նրա 6 միլիոն մահմեդական բնակչությունից պոտենցիալ արմատական է 5 տոկոսը, այսինքն՝ 300 հազարը, որից 9 հազարը չափազանց վտանգավոր են:

Ուսումնասիրողների կարծիքով՝ մահմեդական հասարակության արմատականացման հարցում ոչ պակաս կարեւոր գործոն են կրոնի սպասավորները, որոնք օգտագործում են եվրոպական հասարակության եւ մահմեդականների միջեւ առկա երկփեղկվածությունը, ինչպես նաեւ մահմեդական քաղաքակրթության նկատմամբ եվրոպական եւ ամերիկյան քաղաքականության բացասական դիրքորոշումը՝ հիմնավորելու արմատական իսլամի կարեւորությունը:

Կլոդ Մոնիկյան առանձնացնում է Եվրոպայում իսլամական ծայրահեղականության մի քանի պատճառներ եւ դրսեւորման ձեւեր: Նրա կարծիքով՝ մահմեդականների նկատմամբ առկա խտրականությունը նրանց մեջ ծնում է եվրոպական հանրությունից օտարվելու զգացում: Մյուս կողմից, որոշ սովորույթներ, ինչպես, օրինակ, բազմակնությունը կամ բարձր ծնելիությունը, խոչընդոտում են, որպեսզի եվրոպական հանրությունը համարժեք կերպով ընկալի նրանց: Եվրոպայում տնտեսական եւ սոցիալական ճգնաժամն ուժեղ ձեւով անդրադառնում է մահմեդական համայնքների վրա: Եվրոպական մի շարք երկրներում գործազրկությունն առավել բարձր է հենց մահմեդականների շրջանում: (Այս առումով ոչ պակաս հետաքրքիր է ֆրանսիացի հայտնի քաղաքական

գործիչ ժան-Մարի լը Պենի կարծիքը, թե մահմեդականների ինտեգրմանը իսլամական հասարակություն կարող նպաստել միայն աշխատանքը): Իրեն անլիարժեք զգալով եվրոպական հասարակության մեջ՝ մահմեդական երիտասարդությունը լուրջ պոտենցիալ ունի արձագանքելու իսլամական արմատականության կոչերին: Ասվածի ապացույցն է այն, որ լոնդոնյան վերջին ահաբեկչությունը կազմակերպվեց տեղական ռեսուրսով (մահապարտներից երեքը պակիստանյան ծագում ունեին):

Անժխտելի է այն փաստը, որ Եվրոպայում իսլամն արմատականացման միտում ունի, միաժամանակ փոխվում է Եվրոպայի ժողովրդագրական պատկերը: Արդյունքում՝ ավելի է ընդգծվում Արեւմուտքի մերժողական վերաբերմունքն իսլամի եւ մահմեդականների նկատմամբ, ինչը լուրջ դժվարություններ է ստեղծում Եվրոպայում նրանց հետագա համակեցության առումով:

**ՁԳՏՈՒՄԸ ԶԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՁԱԽՈՂՄԱՆ  
ԷՐԻԿ ԶՈՐԱՔԱՆՈՒՄ**

Սառը պատերազմի ժամանակաշրջանի ԱՄՆ գլոբալ նկրտումների եւ 2001թ. հետո համաշխարհային տիրապետության հասնելու նրա փորձերի միջեւ գոյություն ունի անմիջական կապ, ընդ որում՝ երեք հիմնական ուղղություններով:

*Առաջին* կապը՝ միջազգային ասպարեզում Միացյալ Նահանգների գերիշխանությունն է. սառը պատերազմի ժամանակ՝ համայնավարական վարչակարգերի ազդեցության ոլորտի սահմաններից դուրս, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ արդեն համաշխարհային մասշտաբով: Այս գերիշխանությունն այլեւս չի հիմնվում լոկ ԱՄՆ տնտեսական հզորության վրա: Ամերիկայի տնտեսական ներուժը նախկինի պես մեծ է, սակայն 1945 թվականից այն նվազում է, եւ այդ համեմատական անկումն այժմ էլ շարունակվում է:

Այսօր Միացյալ Նահանգների ազդեցության հիմքում, առաջին հերթին, ընկած է սառը պատերազմի ժառանգությունը. ԱՄՆ դուլարի կարգավիճակը՝ որպես համաշխարհային արժույթ, այդ ժամանակահատվածում ամերիկյան ձեռնարկությունների ձեռք բերած միջազգային կապերը (հատկապես պաշտպանության ոլորտում), միջազգային տնտեսական գործառնությունների եւ գործարար փորձի վերակառուցումն ամերիկյան մոդելով, իսկ հաճախ էլ՝ ամերիկյան ձեռնարկությունների ղեկավարությամբ: Սա հզոր «ակտիվ» է, որը միայն դանդաղ եւ աստիճանաբար կնվազի:

Ռազմատեխնիկական ուժի տեսանկյունից՝ ԱՄՆ-ին առաջվա պես հավասարը չկա: Շնորհիվ այդ ներուժի, Միացյալ Նահանգներն այսօր միակ տերությունն է, որն ի զորու է կարճ ժամկետում արդյունավետ ռազմական ինտերվենցիա իրականացնել երկրագնդի ցանկացած անկյունում, եւ այն արդեն երկու անգամ գործով ապացուցել է ոչ մեծ պատերազմներն արագ շահելու իր ունակությունը: Եվ այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս Իրաքի դեպքերը, այս աննախադեպ ներուժը բավարար չէ նույնիսկ մեկ՝ դիմադրելու պատրաստ երկրի վրա արդյունավետ վերահսկողություն սահմանելու (էլ չխոսենք ողջ մոլորակի մասին): Ինչեւէ, ամերիկյան գերիշխանությունը փաստ է, եւ ԽՍՀՄ անկումից հետո այն ձեռք է բերել գլոբալ բնույթ:

*Երկրորդ* ընդհանուր տարրը՝ ամերիկյան կայսրության յուրօրինակ «ֆիրմային ձեռագիրն» է: ԱՄՆ-ը միշտ նախընտրել է գործ ունենալ արբանյակ պետությունների եւ պրոտեկտորատների, այլ ոչ թե զուտ գաղութների հետ: Էքսպանսիոնիզմը՝ արտահայտված այն անվամբ, որ իրենց համար ընտրեցին Ատլանտիկայի արեւելյան ափի 13 միավորված գաղութները (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), կրում էր մայրցամաքային, այլ ոչ թե գաղութատիրական բնույթ: Հետագայում այդ էքսպանսիոնիզմը «նախասահմանված ճակատագրի» դոկտրինայի տեսքով տարածվեց Արեւմտյան կիսագունդ եւ, մասամբ, Արեւելյան Ասիա:

Այսպիսով, ամերիկյան կայսրությունը կազմված էր ձեւականորեն անկախ պետություններից, որոնք ենթարկվում էին Վաշինգտոնի հրամաններին, բայց քանի որ նրանք, այնուամենայնիվ, մնացել էին ինքնուրույն, ԱՄՆ-ը պետք է միշտ պատրաստ լիներ ճնշում գործադրել նրանց կառավարությունների վրա, այդ թվում՝ «վարչակարգի փոխման» նպատակով, իսկ այնտեղ, որտեղ դա նպատակահարմար էր (օրինակ՝ Կարիբյան ավազանի գաճաճ պետություններում)՝ նաեւ պարբերաբար դիմել ռազմական ինտերվենցիաների:

*Երրորդ* «ուղիղ գիծը» Բուշի թիմի նեոպահպանողականների կոնցեպցիաները կապում է «մաքրակրոն» գաղութարարների այն համոզման հետ, թե հենց իրենք են Աստծո գործիքը երկրի վրա, ինչպես եւ՝ Ամերիկյան հեղափոխության գաղափարների հետ, որը, ինչպես եւ բոլոր մեծ հեղափոխությունները, ծնեց հաղթողների՝ համաշխարհային պատմական առաքելություն ունենալու համոզվածությունը:

Իզոլյացիոնիզմի ու գլոբալացման միջեւ այս հակասությունը շրջանցելու ամենաարդյունավետ միջոցը հետեւողականորեն կիրառվել է 20-րդ հարյուրամյակում եւ 21-րդ դարում էլ շարունակում է բավականին լավ ծառայել Վաշինգտոնին: Այդ միջոցի էությունն այն է, որպեսզի գտնեն արտաքին թշնամու, որն անմիջական ու մահացու սպառնալիք կներկայացնի ամերիկյան կենսակերպին եւ ԱՄՆ քաղաքացիների անվտանգությանը: ԽՍՀՄ «վախճանից» հետո Միացյալ Նահանգները մնաց առանց այդ դերի համար ամենահարմար թեկնածուի, սակայն 90-ականների սկզբին նրան փոխարինող գտնվեց. բախումը Արեւմտյան քաղաքակրթության եւ այն ընդունել չցանկացող այլ մշակույթների, առաջին հերթին՝ իսլամի միջեւ: Ուստի համաշխարհային տիրապետության վաշինգտոնյան կողմնակիցներն իսկույն հասկացան ու լիովին օգտագործեցին սեպտեմբերի 11-ին Ալ-Կաիդայի կատարած գործողությունների վիթխարի քաղաքական ներուժը:

Ողջ մոլորակն «իր հավատքին բերելու» այս երազանքը կյանքի կոչելու առաջին փորձը ձեռնարկվեց դեռ Առաջին աշխարհամարտի

տարիներին՝ վերածելով ԱՄՆ-ը գլոբալ տերության: Սակայն Վուդրո Վիլսոնը ջախջախիչ պարտություն կրեց: Համաշխարհային տիրապետության վաշինգտոնյան ներկայիս գաղափարախոսներին արժե դրանից դասեր քաղել. չէ՞ որ նրանք իրավացիորեն Վիլսոնին համարում են իրենց նախահայրը: Մինչեւ սառը պատերազմի ավարտը, այլ գերտերության գոյությունը նրանց խանգարում էր ամբողջ ուժով ծավալվել, բայց ԽՍՀՄ փլուզումից հետո այդ խոչընդոտը վերացվեց:

Ֆրենսիս Ֆուկույաման շտապեց հայտարարել կապիտալիստական հասարակության ամերիկյան մոդելի լիակատար եւ վերջնական հաղթանակի մասին: Միաժամանակ, ԱՄՆ ճնշող ռազմական գերակշռությունը ծնեց իրենց համաշխարհային գերիշխանության ընդունակ համարող պետություններին բնորոշ՝ անչափելի ամբիցիաներ: Իրոք, 21-րդ դարասկզբին Միացյալ Նահանգներն աշխարհում ուներ պատմության մեջ բացառիկ ու նախադեպը չունեցող հզորություն եւ ազդեցություն: Առայժմ այն մնում է միակ գերտերությունը, որի ուժն ու շահերը սփռվում են ամբողջ աշխարհում: Ամերիկյան մի գլուխ բարձր է մնացած բոլոր պետություններից:

Պատմությունում բոլոր գերտերություններն ու կայսրությունները գիտեին, որ իրենք միակը չեն, եւ նրանցից ոչ մեկը հնարավորություն չունեւ ձգտելու իսկական համաշխարհային տիրապետության: Նրանցից եւ ոչ մեկը վստահ չէր սեփական անխոցելիության մեջ:

Սակայն դա բավարար չէ՝ բացատրելու ամերիկյան քաղաքականությանը հատուկ մեծամոլությունը, սկսած այն պահից, երբ վաշինգտոնյան «գորշ կարդինալների» խումբը որոշեց, որ սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններն իրենց կատարյալ հնարավորություն են տալիս՝ հայտարարելու աշխարհում ամերիկյան միանձնյա գերիշխանության մասին: Նախելառաջ, այս հայեցակարգն աջակցություն չգտավ հետպատերազմյան ամերիկյան կայսրության «հիմնասյուների»՝ պետդեպարտամենտի, զինված ուժերի, հետախուզական ընկերակցության, ինչպես նաեւ սառը պատերազմի ժամանակաշրջանի պետական գործիչների (ինչպիսիք Քիսինջերն ու Բժեզինսկին են) կողմից: Իրենց դաժանությամբ այս քաղաքական գործիչները ոչնչով չեն զիջում այսօրվա Ռամսֆելդին եւ Վուլֆովիցին: Հենց նրանց ժամանակ տեղի ունեցավ մայա-հնդկացիների ցեղասպանությունը Գվատեմալայում (*խոսքն այդ երկրում 1980-ականների քաղաքացիական պատերազմի ընթացքում մայաների զանգվածային սպանությունների մասին է. կառավարական զորքերի ու «մահվան էսկադրոնների» զոհ դարձան 750 հազար մարդ – խմբ.*): Նրանք 50 տարի մշակեցին եւ մոլորակի մի մեծ հատվածի վրա իրականացրին կայսերական գերիշխանության քաղաքականությունն ու լիովին պատրաստ էին

տարածել այն ողջ երկրագնդում: Նրանք քննադատում են պենտագոնյան ռազմավարներին ու համաշխարհային տիրապետության նեոպահպանողական մոլեռանդներին այն բանի համար, որ վերջինները, անտեսելով ամերիկյան դիվանագետների ու զինվորականների կուտակած ողջ փորձը, ոչ մի կոնկրետ գաղափար չեն առաջադրում, միայնակորեն եւ բացառապես ռազմական ուժով գերիշխանության պարտադրումից բացի: Անշուշտ, իրաքում անհաջողությունը սոսկ կամրապնդի նրանց կասկածները:

Նույնիսկ նրանք, ովքեր չեն բաժանում վետերանների հայացքները, կհամաձայնեն, որ ԱՄՆ կայսերական ամբիցիաների, ինչպես նաեւ ամերիկյան կապիտալիզմի գլոբալ շահերի տեսանկյունից՝ Վաշինգտոնի ներկայիս քաղաքականության տրամաբանական արդարացուն պարզապես չկա:

Միգուցե այն ինչ-որ իմաստ ունի սոսկ ներքաղաքական հաշվարկների առումով: Հնարավոր է, որ դա ամերիկյան հասարակության ընդհանուր ճգնաժամի ախտանշան է կամ էլ՝ ստահեղափոխական-դոկտրինյորների խմբի կողմից իշխանության բռնազավթման դրսեւորում: Նման հարցերին դեռեւս պատասխան չկա:

Սակայն կարելի է բավականին վստահորեն ասել, որ այս նախագիծը ձախողվելու է: Բայց քանի դեռ այն իրականացվում է, նրանց համար, ում անմիջականորեն առնչվելու է ամերիկյան ռազմական օկուպացիան, աշխարհին ավելի ու ավելի անտանելի է դառնալու եւ առավել քիչ անվտանգ՝ մնացած բոլորի համար:

**The Guardian,  
Մեծ Բրիտանիա**

## **ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ ՎԵՆՍԱՆ ԺՈՎԵՐ**

*Արդեն հինգ տարի նրանք հեղափոխությունն արտահանում են Արեւելյան Եվրոպա ու Կենտրոնական Ասիա:*

*Նրանք երիտասարդ են, բավական կրթված. նրանց ընդհանուր լեզուն անգլերենն է: Որպես կանոն՝ նրանք աշխատում են արեւմտյան հաստատություններում ու կազմակերպություններում՝ հիմնականում ամերիկյան: Նրանց կարելի է կոչել «միջազգային ժողովրդավարական բրիգադներ», որոնց գործունեությունը համակարգում է Վաշինգտոնը: Նրանցից մի քանիսն անձամբ Ջորջ Բուշի կողմից արժանացել են «ազատության հաղթողների» կոչմանը:*

*Նրանց ներկայացուցիչների հետ մենք հանդիպեցինք Բելգրադում եւ Թբիլիսիում, ինչպես նաեւ Բրատիսլավայում ու Կիեւում, որոնք մանրամասնորեն շարադրեցին հետհամայնավարական բռնապետությունների տապալման իրենց «դեղատոմսերը»:*

Նրանցից ամենափորձառուին կոչում են Պավել Դեմեչ: Նա սլովակ է, 49 տարեկան եւ առաջիններից է ոտք դրել այդ ճանապարհին: 2000թ. Դեմեչը գաղտնի համակարգում էր ընդդեմ Միլոշեւիչի՝ արտասահմանյան օգնության ծրագիրը: Անցյալ տարի նա (նույնպես գաղտնի) ուկրաինական հեղափոխականների խորհրդատուն էր: Բրատիսլավայում ղեկավարում է շատ ազդեցիկ ամերիկյան ոչ կառավարական կազմակերպության՝ «German Marshall Fund»-ի արեւելաեվրոպական բաժանմունքը: Նախկինում լինելով իր երկրի ԱԳ նախարար՝ նա հիմնավորապես գիտի նախկին խորհրդային բլոկի քաղաքական իրադրությունը եւ գիտի, թե ինչպես ընտրել հեղափոխություն անցկացնելու ամենահարմար պահը:

Հաջողությունն, առաջին հերթին, պայմանավորված է առանց բռնության դեմարշով: «Բռնության չդիմելը տալիս է բարոյական առավելություն եւ առաջ բերում մյուսների աջակցությունը, եւ հետո՝ բռնությունն այն ուղորտն է, որտեղ իշխանությունն ուժեղ է»,—բացատրում է Դեմեչը: Հաջողության երկրորդ բանալին գործողությունների մեթոդի մեջ է: «Քվեարկության օրը, երեկոյան,—պատմում է նա,—հավաքվում են կեղծիքների ապացույցները, եւ այդ տեղեկությունները շատ արագ տարածվում են երկրով մեկ: Եվ անմիջապես հարյուր հազարավոր մարդիկ դուրս են գալիս փողոց: Յետո նրանք պետք է խաղաղ ճանապարհով հսկողության տակ վերցնեն պետական հիմնարկները,



որպեսզի ցույց տան ինքնակալներին, որ օրինական իշխանությունն անցել է ուրիշի ձեռքը: Եվ քանզի ոստիկանությունը չի կրակում՝ գործն արված է»:

Սա՝ տեսությունում: Որպեսզի իմանանք, թե գործնականում ինչպես է, լսենք սերբ Սրջա Պոպովիչին: Չնայած 32 տարեկան է՝ այդ բարձրահասակ եւ վտիտ անձնավորությունն արդեն առասպելական կերպար է: Նա 21-րդ դարի առաջին հեղափոխական շարժման կազմակերպիչն է, ինչը մնացածների նախատիպը հանդիսացավ. 2000թ. նրա «ОТПОР»-ը («Դիմադրություն»), չթափելով ոչ մի կաթիլ արյուն, տապալեց Միլոշեւիչին: Այդ օրվանից խորհուրդների համար Սրջա Պոպովիչին դիմում են գրեթե ամեն տեղից՝ անգամ Ջիմբաբվեից: Որպեսզի բավարարի պահանջարկը, նա հիմնեց հեղափոխության փորձագետների բյուրո՝ «Canvas Group»: «Սա մասնավոր բիզնես է, —խոստովանում է նա,— սակայն բյուրոն գրանցված է որպես ոչ կառավարական կազմակերպություն, որպեսզի չմուծի տուրքերը»: Տարեկան շրջանառությունը՝ «առեւտրական գաղտնիք է»: Բելգրադի կենտրոնի նորածեւ «Movie Bar»-ում (որի սեփականատերն է), սեղանի շուրջ նստած, Սրջան բացում է գաղտնիքը. «Հեղափոխության հաջողության համար անհրաժեշտ է երիտասարդություն, երիտասարդություն ու նորից երիտասարդություն: Ինչո՞ւ: Որովհետեւ երիտասարդ էնտուզիաստները քաջ են, եւ իշխանությունը քիչ կարող է ազդել նրանց վրա: Նրանք չունեն երեխաներ, աշխատանք, հարստություն. նրանք կորցնելու ոչինչ չունեն»: Կա եւս մեկ պատճառ՝ առավել գործնական բնույթի, նույնիսկ փոքր-ինչ ցինիկ: «Ամեն անգամ, երբ վարչակարգն ուժ է կիրառում անգն երիտասարդության հանդեպ, ծեծում նրանց ու բանտ նետում, —ասում է Պոպովիչը,— նա թիկունք է դարձնում նրանց հայրերին, պապերին, բարեկամներին, մտերիմներին... Կարճ ասած՝ շատերին, այդ թվում՝ նաեւ իրեն հավատարիմ կողմնակիցներին: Եվ հենց սա՛ է որոնելի նպատակը»:

«Ցանկանո՞ւմ եք մի խորամանկություն պատմեմ, —շարունակում է նա ժպիտով:— Ցույցերի ժամանակ, որոնք խոստանում են ավարտվել բախումներով, առաջին շարքում կանգնեցրեք սպիտակ վերնաշապիկներով երիտասարդ աղջիկների: Եվ սպասեք ոստիկանության գրոհին: Արդյունքն ապահովված է. մի քանի հարվածներից հետո սպիտակ վերնաշապիկների վրա մի քիչ (կամ՝ ցավոք, շատ) արյուն կլինի: Ու կստացվեն փայլուն կադրեր, որոնք կշրջեն ողջ աշխարհի էկրաններով... Եվ վարչակարգը կվարկաբեկվի»:

Հաջող հեղափոխությունը զարգանում է նույնքան ճշգրիտ սցենարով, ինչպիսին համակարգչային ծրագիրն է:

*Առաջին փուլ.* «Ընտրություններից շատ առաջ հարկավոր է ստեղծել ծայրահեղ շահագրգիռ երիտասարդության խմբեր, որոնք կլինեն

«նիզակի ծայրակալը»՝ հեղափոխության գործիքը»,—բացատրում է Պոպովիչը: Այդ խմբի համար անհրաժեշտ է ընտրել անուն: Ինչպիսի՞նք:

Լսենք Ալեքսանդր Մարիչին: «Օտոր»-ի մյուս երեք վետերանների հետ մեկտեղ այս 30-ամյա սերբը Բելգրադում ստեղծել է հեղափոխության եւս մեկ փորձագիտական գրասենյակ. նա Պոպովիչի մրցակիցն է: Մարիչը երաժշտամուլ է, եւ դա օգնեց նրան ընտրել անվանումը: Յեղափոխական խմբի անունը պետք է լինի կարճ, երկու վանկից ոչ ավելի, հեշտ հիշվող՝ ինչպես «Levis»-ը կամ «Coca»-ն, եւ հզոր՝ ինչպես կարգախոսը: Այն լինելու է հեղափոխության ստորագրությունը, «մակնիշը»:

*Երկրորդ փուլ.* հարկավոր է «գործի գցել» այդ նոր «մակնիշը»: Ահա բլիցկրիզ գործողության օրինակ: 2003թ. գարնանը Սորոսի հիմնադրամն Ալեքսանդր Մարիչին ու նրա թիմին ուղարկեց Վրաստան. նրանք պետք է դառնային սաղմնավորվող բողոքող խմբի առաջնորդների խորհրդատուները: Վրացի ներկայացուցիչները 20-ն էին, եւ նրանք արդեն ընտրել էին անվանումը՝ «Կմարա» («Բավ է»): Մնում էր երկրով մեկ տարածել այդ անունը: Բելգրադցի «Չե Գեւարա»-ները առաջարկեցին ծրագիր. վրացի երիտասարդ էնտուզիաստներն այն անմիջապես ի կատար ածեցին: Ապրիլյան գիշերը նրանք Թբիլիսիի եւ ինն այլ քաղաքների գլխավոր փողոցներում փակցրին «Կմարա» մակագրությամբ հարյուրավոր պլակատներ: Արդյունքը գերազանցեց բոլոր սպասելիքները. լուսաբացին ողջ երկիրը միայն խոսում էր այդ պլակատների մասին: Շեւարդնաձեն ծուղակն ընկավ: Այդ «խզբզոցներն» արհամարհելու փոխարեն, նա ռադիոյով ու հեռուստատեսությամբ շարունակ հանդես էր գալիս մերկացումներով՝ ակամա գովազդելով այդ փոքրիկ խումբը, որը բոլորին թվում էր որպես զանգվածային շարժում: Մարքեթինգային գրոհը հաջողվեց. մի գիշերվա ընթացքում «Կմարա» հեղափոխական «մակնիշը» գործի դրվեց:

*Երրորդ փուլ.* գտնել միջոցներ, քանզի խմբին շուտով անհրաժեշտ է լինելու տպել հազարավոր թռուցիկներ, պիտակներ, թողարկել մակագրություններով վերնաշապիկներ: Յարկավոր է ստեղծել ինտերնետային կայք, գնել քարթիջներ, մոբիլ հեռախոսներ, պլակատներ... Շարժման անհրաժեշտ է լինելու նաեւ կազմակերպել իր մարտնչող կողմնակիցների հավաքը, որոնք, պետք է հուսալ, կժամանեն երկրի բոլոր ծայրերից: Այդ նպատակով անհրաժեշտ է վճարել գնացքի հարյուրավոր տոմսերի, հյուրանոցներում անցկացվող գիշերների, վարձակալվող բնակելի տարածքների, սննդի համար: Եվ հետո՝ պահանջվելու է արտասահմանյան խորհրդատուների ծառայությունների վճարումը: Կարճ ասած՝ անհրաժեշտ է գտնել «ընդամենը» մի քանի միլիոն դոլար:

Որպեսզի դրանք ճարվեն, պետք է գործի լծվել նախապես, քանզի նման գումարներ կարելի է գտնել միայն արտասահմանում: Տեղերում հարուստ գործարարներն այս ձեռնարկին անվստահությամբ են

վերաբերվում. նրանք չեն ցանկանում փչացնել հարաբերություններն իշխանությունների հետ: Սոսկ հեղափոխության սկսումից նրանք կնետվեն մյուս ճամբարը եւ կապոցներով փողեր կտան երիտասարդ հեղափոխականներին: Իսկ առայժմ օգնությունը պետք է փնտրել դրսում, մասնավորապես՝ Վաշինգտոնում, որովհետեւ, համաձայն ընդհանուր կարծիքի, եվրոպացիները զգուշավոր են, դանդաղկոտ ու ժլատ, բացառությամբ, այն էլ միայն առանձին դեպքերում՝ բրիտանացիների, հոլանդացիների եւ լեհերի: Ֆրանսիացիներին երբեք չեն դասում «դոնորների» շարքը:

Ինչ վերաբերում է «նարնջագույն հեղափոխությանը», ապա դիմումները ԱՄՆ խոշոր մասնավոր հիմնադրամներին ու հասարակական կազմակերպություններին (USAID եւ National Endowment for Democracy) իրականում սկսվեցին դեռ 2003թ. աշնանը, այսինքն՝ իրադարձություններից մեկ տարի առաջ: Սլովակ Բալաշ Յարաբիկն օգնել է ուկրաինական «Որա» խմբին՝ Ատլանտիկայի մյուս ափից դրամական օժանդակություն հայթայթել: Դրա համար նա գումար է ստացել ամերիկյան «Freedom House» կազմակերպությունից, որը չի ցանկացել միայնակ ֆինանսավորել «Որա»-ին: Այո՛, հեղափոխությունում, ինչպես եւ բիզնեսում, հաճախ է ամեն ինչ սկսվում ներդրողների խորհրդակցությունից... «Հեղափոխությունը բարձր մրցակցությամբ շուկա է,—ասում է Յարաբիկը, որը բարձրագույն կրթություն ստացել է Կոլումբիական համալսարանում:— Ժողովրդավարական խմբերի առաջնորդները պետք է ուղեւորվեն Վաշինգտոն, որպեսզի լավագույնս «իրենց վաճառեն» կապիտալ տվող հիմնադրամներին: Որպեսզի պատրաստվեն այդ մեծ քննությանը, հարկ է լինում հղկել սեփական փաստարկները, պատրաստել ծրագրեր եւ ֆինանսական աղյուսակներ...»: Այո՛, ճիշտ այնպես, ինչպես բիզնեսում:

*Չորրորդ փուլ.* հավաքել առավելագույն թվով ակտիվիստներ: Ստանալով առաջին գումարները՝ «բարի լուր» տանելու համար շրջաններ են ուղարկվում հեղափոխության շրջիկ գործակալները: Ժողովից ժողով նրանք պետք է նորից կրկնեն, թե ամեն ինչ հնարավոր է, որ իրենց հաջողվել է սեփական երկրում տապալել դիկտատորին:

Սովորաբար ժողովները կազմակերպվում են բաց երկնքի տակ՝ քաղաքից դուրս: Որպեսզի չհարուցեն ոստիկանության կասկածները, ասում են, թե դա հանգստի մեկնող խումբ է: Ժողովներում տիրող մթնոլորտը միաժամանակ հիշեցնում է ե՛ւ «խենթերի ակումբ», ե՛ւ զինվորական պատրաստության պարապմունք:

«2004թ. ապրիլին,—պատմում է հետխորհրդային տարածքում հեղափոխությունների գծով խորհրդատու՝ 24-ամյա Կետո Կոբիաշվիլին,—մի հոլանդական կազմակերպություն ինձ ուղարկեց Օդեսա, որպեսզի հավաքեմ մոտ 30 երիտասարդ մարդկանց, պատրաստեմ ու ոգեւորեմ նրանց:

Ես երկու շաբաթ ապրում էի ճոխ հյուրանոցում, առանձին համարում: Դեռ ավելին՝ ստացա 250 եվրո: Երա՛գ էր»: Սա դեռ ամենը չէ: «Դրանից մի քանի ամիս անց Սորոսի հիմնադրամը Ալմա Աթայում կազմակերպեց սեմինար դազախ ակտիվիստների համար: Այնտեղ էլ մենք հանդիպեցինք մեծ հյուրանոցում: Ամեն ինչ մեր տրամադրության տակ էր. տեսախցիկներ, որպեսզի պատրաստվենք հարցազրույցներին, եւ անգամ սարքավորումներ՝ միկրոֆոնները խլացնելու համար, որոնք դազախական գաղտնի ոստիկանությունը չէր զլացել տեղադրել նիստերի դահլիճում»:

*Չինգերորդ փուլ.* հասարակական կարծիքի ուշադրության գրավման նպատակով՝ միաժամանակ երկու կամպանիա տանել: Սա ամենաբարդ փուլն է. այստեղ պահանջվում է առավելագույն նրբություն: Առաջին կամպանիայի նպատակն է՝ բացատրել քաղաքացիներին, թե որոնք են ընտրություններում իրենց իրավունքները եւ դրդել նրանց քվեարկելու: Երկրորդի նպատակն է՝ կոռումպացված եւ ավտորիտար վարչակարգերի մերկացումը: Յուրաքանչյուր կամպանիա ունի իր անվանումը, կարգախոսը, բուկլետը: Այս երկու գործողություններն իրականացվում են ակտիվիստների միեւնույն խմբով, բայց ուշադրություն. այդ մասին չպիտի իմանան: «Հակառակ դեպքում առաջին կամպանիան, որը պիտի լինի անկախ, կծախողվի»,—բացատրում է Դմիտրի Պոտեխինը: Ոչ բարձրահասակ, կլոր ակնոցներով այս 29-ամյա ժպտերես ուկրաինացին «նարնջագույն հեղափոխության» առանցքային դեմքերից էր: Յուշչենկոյի հաղթանակից հետո նա անմիջապես մեկնեց Մոլդովա, որպեսզի նրանց «բերի իր հավատքին»: Այս նորահավատը մարքեթինգի արհեստավարժ մասնագետ է: «Միաժամանակ ու գաղտնի երկու գործողություններ անցկացնելը չափազանց դժվար է,—ասում է նա:—«Որս» շարժումում մենք այնքան քիչ էինք, որ ակտիվիստները պետք է օրվա ընթացքում մի քանի անգամ զգեստափոխվեին՝ տարածելով այդ եւ մյուս կամպանիայի թռուցիկները...»:

*Վեցերորդ փուլ.* փողոցներում, առանց բռնության գործադրման, կատարել արդյունավետ գործողություններ: Նպատակը՝ արթնացնել քաղաքացիներին եւ գրգռել ոստիկանությանը: Առավել նախընտրելի մեթոդը՝ «հայտնվող եւ անհետացող» խմբի կազմակերպումն է: «Դրանք մեծաքանակ մարդկանց կարճատեւ հավաքներ են, եւ ոստիկանությունը չի հասցնում ոչ ոքի կանգնեցնել,—բացատրում է Դմիտրի Պոտեխինը:—Օրինակ, հեղափոխական խմբի 15 անդամներ զգեստավորվում են բանտարկյալների հագուստով եւ հագնում գորշ վերարկուներ: Սորիլ կապի միջոցով նրանք նշանակում են հանդիպում մայրաքաղաքի գլխավոր փողոցում այն պահին, երբ այնտեղ խառնաշփոթ է: Նշանակված ժամին հանում են վերարկուներն ու նմանվում բանտարկյալների: Նրանք մի քանի անգամ գոչում են. «Ես քվեարկում եմ X-ի օգտին»: X-ն, անշուշտ,

հանդիսանում է տեղի դիկտատորը: Այնուհետև ցուցարարները հազնում են վերարկունները, հեռանում մետրոյի խորքը եւ կորչում անհետ: Արդյունքն ապահովված է. ոստիկանությունը գազազած է, սկսվում են բռնությունները»:

*Յոթերորդ փուլ.* պահպանել խումբը: Ինչպե՞ս: Սերբ Միլոշ Միլենկովիչն իր բելառուս կամ ադրբեջանցի «կլիենտներին» սովորեցնում է ընդհատակյա գործունեության այբուբենը: «Սրանք դիմակայության դասական հնարքներ են,— ասում է 27-ամյա այս հաղթանդամ, զվարճասեր անձնավորությունը:— Հեղափոխական խումբը չպետք է մեկ մարդ ղեկավարի: Հակառակ դեպքում նրա գործունեությունն առաջնորդի ձերբակալության պատճառով կաթվածահար կլինի: Պետք է ստեղծել կոլեգիալ ղեկավարություն, այսինքն՝ առաջնորդի գործառնությունները բաշխել մի քանի պատասխանատու անձանց միջեւ, որոնք չգիտեն այն մանրամասները, թե ինչ են անում մյուսները»: Մեկ այլ օրինակ. «Որպեսզի խճճվի կառավարման սխեման, անհրաժեշտ է ամեն շաբաթ փոխել պաշտոնական ներկայացուցիչն»: Միլենկովիչի կարծիքով, հարկավոր է պահպանել գաղտնիության այս մթնոլորտը: «Երիտասարդներին հրապուրում են խորհրդավոր կազմակերպությունները,— շարունակում է նա:— Գաղտնիության այս հմայությունը թույլ է տալիս հաղթահարել հուսահատությունը եւ միանալ խմբին, որին իշխանությունը համարում է ահաբեկչական»:

*Ութերորդ փուլ.* սովորել կառավարել վախը: «Դրա համար կան բազմաթիվ նրբություններ,— ճշտում է Միլոշ Միլենկովիչը:— Ցույցի ժամանակ երիտասարդները երբեք չպետք է իրենց մեկուսացված զգան. նրանք պետք է մյուսների հետ մշտապես ֆիզիկական շփման մեջ լինեն: Անհրաժեշտ է նաեւ, որ նրանք երգեն ու չլսեն ոստիկանության կամ զինվորների անհանգստություն առաջացնող աղմուկը: Որպեսզի թաքցվի ցույցի առջեւ բազմաքանակ զինված մարդկանց առկայությունը, կարելի է երթի սկզբից տանել մեծ ցուցապաստառ. այն ցուցարարներին կխանգարի տեսնել իրենց վախեցնող զինվորների կուտակումները»: Մյուս հնարքը՝ բացատրել, որ ձերբակալությունը ողբերգություն չէ: Սեմինարներում սկսնակ հեղափոխականների դաստիարակները կազմակերպում են ոստիկանական շուրջկալների փորձեր: Ոմանք հանդես են գալիս ոստիկանների դեռում, մյուսները՝ ցուցարարների: Սեմինարներում սովորեցնում են պատասխանել խուսափողաբար, երբեք չդրսելորել ազդեցիկություն, նույնիսկ ժպտալ: Մշակվում է նաեւ բանտ նետված ընկերներին աջակցելու ռազմավարությունը: «Նրանք, ովքեր չեն ձերբակալվել, պետք է իմանան ում դիմել՝ որ փաստաբանին, ոչ կառավարական որ կազմակերպությանը, տեղական կամ արտասահմանյան որ լրագրողին: Նրանց մոտ պիտի լինի այն ակտիվիստների ցանկը, որոնց հետ

հնարավոր է կապվել եւ որոնք այնուհետեւ իրենք կկապվեն նրանց հետ, որպեսզի ոստիկանական տեղամասի առջեւ ցույց կազմակերպեն, ինչի մասին կխոսեն զանգվածային լրատվամիջոցները»,—ասում է Գեորգի Կանդելակին, որն անցյալ տարի այս կանոնները բացատրում էր ղազախներին: Եվ քաղաքական գիտությունների այս մասնագետն ու ամերիկյան համալսարանի շրջանավարտը հետեւություն է անում. «Այդպիսով, մենք հակառակորդի ուժը շրջում ենք հենց իր դեմ»:

Ահա՝ ամեն ինչ իր տեղում. ակտիվիստներին հավաքագրում եւ ուսուցանում են, տարածվում են մի քանի հազար թռուցիկներ, կազմակերպվում են մի քանի «հայտնվող եւ անհետացող» խմբեր, ու շարժումը հասցնում է առաջին հարվածները: Եվ երբ պետք է սկսվեն անխուսափելիորեն կեղծիքներով ուղեկցվող ընտրությունները, նորաթուխ հեղափոխականներն արդեն պատրաստ են դրանք բողոքարկելու: Դաստիարակների աշխատանքն ավարտված է:

Առաքելությունն իրականացված է, եւ ժողովրդավարական հեղափոխության շրջիկ գործակալներն արդեն նոր նպատակներ ունեն: Նախկին խորհրդային կայսրությունում նոր հեղաշրջումներ են պատրաստվում: Որպեսզի արագացվի գործընթացը, նրանք մտադրված են Կիեւում հիմնել հեղափոխությունների տարածման նոր կենտրոն՝ ժողովրդավարության միջազգային ինստիտուտ անվամբ: 2005թ. փետրվարին ինստիտուտի ստեղծման նախաձեռնող, պատվախնդիր Վլադիսլավ Կասկիվն իր նախագիծը ներկայացրեց անձամբ Ջորջ Բուշին: «Ես նրան ասացի, թե կցանկանայի, որ ինստիտուտը հովանավորեին եւ համակարգեին այնպիսի ճանաչված դեմքեր, ինչպիսիք են Վազլավ Յավելը, Լեխ Վալենսան կամ Մադլեն Օլբրայթը»,—ասում է «Որս» շարժման նախկին առաջնորդը, որը «նարնջագույն հեղափոխությունից» հետո ջինսը փոխեց փողկապով եւ մուգ կոստյումով: Այս լուրջ անձնավորությունը բախտ է ունեցել տպավորություն գործել Սպիտակ տանը. ամերիկացիները, երեւում է, նրան խոստացել են օգնել, այդ թվում՝ նաեւ ֆինանսապես:

Նման ուշադրությունը նյարդայնացնում է Արեւելքի վերջին բռնապետերին: Տարեմուտին ընտրություններ կանցկացվեն Ղազախստանում: Տեղի տիրակալն արդեն նախազուշական միջոցներ է ձեռնարկել. նա բանտ է նստեցրել շատ ակտիվիստների եւ մերժել Վլադիսլավ Կասկիվին՝ գտնվել իր տարածքում:

Ինչ վերաբերում է բելառուսական միապետին, որի դեմ հղացված «թավշյա հեղափոխությունը» 2001թ. պարտվեց, ապա նա ջանում է ցանկացած գնով «ժողովրդավարական բրիգադների» անդամներին հետ պահել իր երկրի տարածք մտնելուց: Վերջերս նա բանտ նետեց ուկրաինացի հինգ ակտիվիստների: Անցած տարի նրա հրամանով ծեծի ենթարկվեցին ու հետո երկրից վտարվեցին սերբեւ սլովակ հեղափո-

խականները: Սակայն, այնուամենայնիվ, հեղափոխության որոշակի պատրաստություններ երկրից դուրս կատարվում են: «International Republican Institute» կազմակերպությունը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Կոնգրեսի կողմից, հարեւան Լիտվայում գաղտնի պատրաստում է բելառուս ակտիվիստներին:

2004թ. վերջին «Freedom House» հիմնադրամը Ռուսաստանը դասեց ոչ ազատ երկրների շարքը: Խորհրդային Միության փլուզումից հետո նման բան առաջին անգամ էր տեղի ունենում: Ռուսաստանի նախագահին իրենց «ռազմական ավարների» հավաքածուում ավելացնելը նոր «Չե»-երի երազանքն է: Առավել եւս՝ այդ է նրանց գերագույն նպատակը: Մի քանիսն արդեն աշխատում են սկզբնավորվող հեղափոխական խմբերում: Այս ամռանը նախատեսված է սեմինարների անցկացում Ղրիմում եւ Ռուսաստանում, որոնց կոնկրետ վայրն առայժմ գաղտնի են պահում: Սակայն Կրեմլի տիրոջ տապալումը դյուրին գործ չէ: Թվում է, թե նա ամուր ձեռքով պահում է իր հատուկ ծառայություններն ու բանակի մեծ մասը: Նա բացահայտորեն պաշտպանեց արյունոտ բռնարարքներն Ուզբեկստանում, եւ այդպիսով հասկանալ տվեց, որ ինքն էլ չի վախենա կրակել ամբոխի վրա, եթե դա անհրաժեշտ համարի: Վերջապես, ՌԴ նախագահն ակտիվիստների գործունեությունը խափանելու համար այլ միջոցներ է գտել: Նա ստեղծել է սեփական երիտասարդական կազմակերպությունը: Այն «Отпор», «Կմարա» եւ մյուս շարժումների նմանակն է՝ նույնպես երկվանկանի անվանումով՝ «Наша». նույն վերնաշապիկներն են, նույն ժպիտները: Բայց ծրագիրն ազգայնական է, ելույթները՝ կոշտ: Եվ սա ամենը չէ: Անվտանգության դաշնային ծառայությունը դես ու դեն է ընկնում, լրտեսում, մանիպուլացնում. գործակալները ներդրվում են «բողոքող» խմբերում եւ ստեղծում այլ՝ կեղծ խմբեր, որպեսզի խառնեն խաղաքարտերը: Մոսկվայում միջազգային ժողովրդավարական գործակալների համար դժվար կլինի:

Շատ հարցեր են մնում: Առաջին. արդյո՞ք «ժողովրդավարական բրիգադների» անդամները Վաշինգտոնի սովորական գործակալներ են, ինչպես ցանկանում են ներկայացնել Կրեմլում եւ այլուր: Գիշտ է, նրանք աշխատում են ամերիկյան (երբեմն՝ նաեւ եվրոպական) կազմակերպությունների համար, եւ դա չեն թաքցնում: Գիշտ է նաեւ այն, որ նրանք կիսում են քեռի Սեմի արժեքները՝ ժողովրդավարությունն ու դուլարը, եւ ցանկանում են դրանք ամուր ներդնել հետխորհրդային տարածքում: Վերջապես, ակնհայտ է, որ Սպիտակ տունը, հանձինս նրանց, տեսնում է իր «փափուկ ուժի» վեկտորներին, Ռուսաստանի հետ տարվող աշխարհաքաղաքական շախմատային խաղի զինվորներին: Բայց արդյո՞ք նրանք ԱՄՆ շահերը վեր են դասում այն երկրների շահերից, որտեղ աշխատում են: Եվ ինչպիսի՞ աներիկայի մասին է խոսքը՝ «Freedom

House»-ի նեոպահպանողականների՝ Ամերիկայի, թե՛ ֆինանսիստ-հումանիստ Ջորջ Սորոսի, որը միլիոնավոր դոլարներ է ծախսում Ջորջ Բուշի հետ պայքարում:

Հարց երկրորդ. իրո՞ք այդ հեղափոխությունները ժողովրդական էին, թե՞ մի քանի ակտիվիստների ձեռքի գործ: Իրականում՝ ե՛լ նա, ե՛լ մյուսը: Ինչպես մենք ցույց տվեցինք, դրանք կանխապես նախապատրաստվել էին ակտիվիստների ոչ մեծ կորիզի կողմից: Որպեսզի արթնացնեն ժողովրդին, բորբոքեն նրան, այդ խմբերը դիմեցին քարոզչության այժմ բոլորին հայտնի հնարքներին, իսկ երբեմն՝ նաեւ մանիպուլյացիաների: Սակայն առանց ավտորիտար ու կոռումպացված վարչակարգի կողմից հուսահատության հասցված ժողովրդի ցասման, առանց նրա կամքի՝ կրկին թույլ չտալու գողանալ իրենից ընտրությունները եւ առանց հարյուր հազարավոր մարդկանց, ովքեր կամովին դուրս էին եկել Բեյգրադի, Կիեւի կամ Թբիլիսիի փողոցները, ոչինչ տեղի չէր ունենա:

Սակայն ծագում է եւս մեկ՝ վերջին հարցը. իսկ ի՞նչ է լինելու հեղափոխությունից հետո: Այլ խոսքով՝ ի՞նչ կկատարվի այդ ժողովուրդների հետ մի քանի տարի անց: «Չե՞ն հայտնվի, արդյոք, նոր ղեկավարները նույն փոսում, ինչպես իրենց նախորդները, որոնք, հարկ է հիշել, նույնպես իշխանության եկան ժողովրդական ապստամբության ալիքի վրա»,—հարցնում է Միջազգային հետազոտությունների կենտրոնի Արեւելյան Եվրոպայի գծով խոշոր մասնագետ Ժակ Ռուպինիկը: Սերբական օրինակն ավելի շուտ հուսադրում է: Միլոշեւիչի վարչակարգի անկումից հինգ տարի անց երեւում է, որ ժողովրդավարությունը Բեյգրադում հետզհետե կայունանում է, եւ մարդու իրավունքներն, ընդհանուր առմամբ, պաշտպանվում են: Սակայն Թբիլիսիի պարագայում, որտեղ Ջորջ Բուշը մայիսին որպես մեսիա ընդունվեց, կացությունն առավել խնդրահարույց է. 2003թ. «վարդերի ապստամբության» շատ առաջնորդներ արդեն հանդես են գալիս նոր իշխանությունների դեմ՝ կոռուպցիային ու միլիտարիզմին վերադառնալու մերկացումներով:

Այսպիսով՝ խաղն ավարտված չէ: Եվ հեղափոխության «ալքիմիկոսների» դեղատոմսերով գրքերը դեռ պետք կգան: Քանզի Թբիլիսիում, Կիեւում կամ Բիշքեկում նրանց գուցե մեկ անգամ եւս հարկ լինի ամեն ինչ նորից սկսել:

**Le Nouvel Observateur,  
Ֆրանսիա**



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Դավիթ Յովհաննիսյան ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ ....	1
Սարգիս Յարությունյան ԱԴՐԲԵՋԱՆ. <i>ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ</i> .....	8
Արսեն Հակոբյան ԼԵՁԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ .....	14
Գագիկ Տեր-Յարությունյան ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ .....	19
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆ. <i>ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ, ՀԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ</i> .....	24
Արտակ Շաքարյան ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՐԸ «ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ» ՆԱԽԱԳԾՈՒՄ .....	29
Կարեն Վերանյան ԻՍՐԱՅԵԼ. <i>ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ</i> .....	33
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԻ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ .....	39
Էրիկ Յոբսթաուն ՁԳՏՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՁԱԽՈՂՄԱՆ .....	44
Վենսան Ժովեր ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ .....	48

*Շապիկի վրա պատկերված է  
Այրիվանքը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: